

## ՀՅ ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳԻՐԵՐԸ

Մաս ութերորդ: ՀՅԴ Գերագույն դատական ատյանի  
1920 թ. փետրվարի 27–մարտի 22–ի նիստերի  
արձանագրությունները\*

**Շարունակելով ՀՅԴ Գերագույն դատական ատյանի նիստերի արձանագրությունների հրապարակումը՝ ներկայացնում ենք կուսակցության 1917–1918 թթ. գործունեության, ինչպես նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, գաղթականների վիճակի բարելավման ու Միացյալ Հայաստանի ակտի հետ կապված՝ ներկուսակցական տարաձայնությունների քննությանը նվիրված նյութերը:**

Հրապարակվող արձանագրություններում քննության առարկա տարաբնույթ հարցերից առանձնացնենք առավել կարևորները:

1917–1918 թթ. կուսակցական զենքի ստացման–բաշխման հետ կապված մեղադրվող՝ ՀՅԴ Բյուրոյի փոխանդամ Գևորգ Ղազարյանը կատարված քննության ընթացքում հիմնավոր փաստերով հերքել է առաջադրված ամբաստանությունները՝ զուգահեռաբար արժեքավոր տվյալներ հաղորդելով կուսակցության մարտական գործունեության վերաբերյալ: Նույն ձևկատագիրն է ունեցել նաև 1918 թ. Բաքվի հերոսամարտի մի շարք դրվագների կապակցությամբ ամբաստանվող դաշնակցական գործիչների հարցի քննությունը:

Նախորդ նիստերում բազմիցս քննարկված ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման վիճահարույց ընթացքի հետ կապված, ՀՅԴ Գերագույն դատական ատյանը մեկ անգամ ևս լսելով Իջևանի գործիչների ցուցմունքները, վերջնական քննության ընթացքում արդարացման վճիռ կայացրեց՝ բեկանելով Երևանի Կենտրոնական կոմիտեի որոշումը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Նովոռոսիյսկում, Երևանում և հատկապես Բաքվում գաղթականական գործերի հետ կապված՝ Ավետիս Օհանջանյանի գործունեության հետաքննությունը: Հանգամանալից քննության ընթացքում բացահայտվում են գաղթականների ապրած ողիսականը, նրանց նկատմամբ դաշնակցական կառույցների հոգատար վերաբերմունքը և տարաբնույթ դժվարությունները հաղթահարելու գործընթացը:

Ներկուսակցական խնդիրների տեսանկյունից հետաքրքրական են Վարագդատ Տերոյանի, Մմբատ Բորոյանի, Ռուբեն Դրամբյանի, Գրիգոր Բուլղարացու, Գրիգոր Ղլղաթյանի, Հայկակ Կոսոյանի, Ա. Տեր–Պողոսյանի, ՀՅԴ Վանի կոմիտեի անդամներ Մ. Էյնաթյանի, Ղ. Սերոբյանի, Կ. Պելլերյանի հակակուսակցական և հակակարգապահական ընթացքի առթիվ Վահագն Քրմոյանի ներկայացրած մե–

\* Ընդունվել է տպագրության 10.09.2014:

ղաղրանքները: Խոսքը վերաբերում էր Միացյալ Հայաստանի ակտի և դրանից բխող խնդիրների հետ կապված՝ ՀՅԴ և ՀՀ որդեգրած քաղաքական ուղեգծին ընդդիմանալուն (ակտի ընդունման, խորհրդարանում արևմտահայ պատգամավորների ընդգրկման, արևմտահայերի գինվորագրման, ներքին տարածայնությունները հարթելու նպատակ ունեցող Բյուրոյի հրավերների մերժման տեսքով): Այն արտահայտվել էր նաև ՀՀ խորհրդարանի ընտրությունների բոլորտման փորձերի և ՀՀ կառավարությանը զուգահեռ գործադիր մարմնի ստեղծման ցանկության տեսքով:

Նախորդ նիստերում բազմիցս քննարկված գեներալ Ղամազովի սպանության գործի առթիվ հանգամանալի մտքափոխանակությունից հետո ՀՅԴ Գերագույն դատական ատյանը Միշա Արզումանյանին հակակարգապահական ընթացքի համար հինգ ամսով կախակալել է ՀՅԴ շարքերից:

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում «մեկ հայ, մեկ ոսկի» ծրագրի հետ կապված՝ Կարո Սասունու դեմ ուղղված Սմբատ Բորոյանի մեղադրանքները և 1917 թ. դեկտեմբեր-1918 թ. հուլիս ժամանակահատվածում գործած Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի ֆինանսական գործունեության քննությունը:

Թվարկված հարցերի քննարկման, ինչպես նաև դատավճիռների միջոցով Գերագույն դատական ատյանը դրսևորել է ՀՅԴ հեղինակության և արդարացիության պահպանման իր հետևողական ձգտումը:

Հրապարակվող արձանագրությունները պահվում են Հայաստանի ազգային արխիվի Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ֆոնդում (ֆ. 1457): Ընդգծումները բնագրին են: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ: Խմբագրական հավելումները տրվել են ուղղաձիգ [ ] փակագծերում:

Ավագ Ա. Հարությունյան  
*Պատմ. գիյր. թեկնածու*

## **DOCUMENTATION OF AR FEDERATION'S HISTORY OF 1918-1920.**

Part Eight: Protocols of sessions of the AR Federation Supreme Court on February 27- March 22, 1920.

Avag A. Harutyunyan

## **ДОКУМЕНТЫ ИЗ ИСТОРИИ АРФ ДАШНАКЦУТЮН 1918-1920 гг.**

Часть восьмая: Протоколы заседаний Верховного суда АРФ Дашнакцутюн с 27 февраля – 22 марта 1920 года.

Аваг А. Арутюнян

52-րդ նիստ

27 Փետր.[վար] 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օգանեան:

Օրակարգ

1. Գէորգ Ղազարեանի<sup>1</sup> ցուցմունքները իր դէմ յարուցուած հարցի առթիւ:

Լուծում

Արևելեան Բիւրօի Քննիչ Յանձնաժողովը իր ընդհանուր զեկուցագրին մէջ մի քանի մեղադրական կէտեր ներկայացուցած էր նաև ընկ. Գէորգ Ղազարեանի դէմ: Դատական Ատեանս հրաւիրեց իր նիստին ընկերը, որ ընդարձակ ցուցմունքներ տուաւ Ատեանիս, որոնց ամփոփումը հետևեալն է.

1. Ճշմարիտ է, ես ստացած եմ 96 հատ  $3/\pi^2$  հրացան և 7.500 փամփուշտ, իսկ յանձնած եմ Փանեանին<sup>3</sup> 317 հատ հրացաններ, զանազան տեսակի, 5 արկղ  $3/\pi$  հրացաններ և 62 լիքը, չբացուած [արկղ], 12 հատ բաց ժեստանկայ<sup>4</sup>, մի հատ երկար արկղ լիքը փամփուշտներ:

Ինչպէս ստացողական, նոյնպէս և յանձնողական ցուցակները իր ժամանակին կազմուած է շատ որոշ և պարզ կերպով, հրացանների և փամփուշտների իսկական քանակը շատ խնամքով նշանակուած է եղել, այդ կարող է վկայել ինքը՝ ստացող Փանեանը, [ՀՅԴ] Կ.[նտրոնական] կոմիտէի ներկայացուցիչը և հաշուապահ Սմբատը, և եթէ փաստաթղթեր չկան, յանցաւորը այն մարմինն է, որ չի կարողացել պահել և իր ժամանակին ներկայացնել քննիչ մարմնին:

Ճշմարիտ է, սակաւ թուով եմ ստացած, սակայն աւելի մեծ թուով յանձնած եմ և եթէ աւելի թուով ռազմամթերք որմէ ստացած լինելու համար փաստաթղթեր չկան՝ դրա պատճառը պէտք է որոնել այն անորոշութեան մէջ, ուր կը գտնուէին այն արսենալէն<sup>5</sup> փոխադրող ընկերներ Մանասեանը<sup>6</sup> և Արտուշ Քոչարեանը իրենց գործունէութեամբ, և այն պահեստը, որ գետեղուած էր Ազգ.[ային] Բիւրօի շինութեան մէջ, և որը յայտնի չէր, թէ որոն և կ'ենթարկուէր: Մի քանի անգամ ես ինքս կ'ամեցել եմ ստացածներու համար ստացական տալ, սակայն ոչ որ չի համաձայներ ստանալ, ըսելով որ նախ և առաջ պէտք է որոշուի, թէ պահեստը որոն է ենթարկուելու, ո՞ր է լինելու հիմնական պահեստը, կ'լն.: Արկղերուն մէջ փակուած զէնքերը տեղադրուած էին ոչ հիմնական պահեստի մէջ, այլ՝ հարևան սենեակի մէջ և ես անոնց ամբողջական պատասխանատուութիւնը բնաւ չեմ վերցուցած ինձ վրայ, թէպէտ նոյնութեամբ յանձնել եմ ընկեր Փանեանին:

Չմոռնամ յիշատակել, որ բուն պահեստի մէջ գետեղուած են եղեր Գ-րդ տղայոց գիմնազիայէն գրաւուած թուով կարծեմ 96 զանազան տեսակի հրացաններ և բաւական թուով փամփուշտ:

2. Իմ ստացած հրացաններէն դուրս է տրուած [ՀՅԴ] Բիւրօի կամ Կեդրոնական կոմիտէի որոշումների հիման վրայ, և վերցնողներէն ստացականներ եմ առած: Այդպիսի զէնքերու թիւը եղած է շատ սակաւ և յանձնած ժամանակս Փանեանը ինձմէ ստացած է նաև այն ցուցակը, թէ որմէ պահեստը զէնքեր ունի ստանալիք: Այդ պահեստէն դրամով բնաւ զէնք չէ վաճառուած:

1 ՀՅԴ Բյուրոյի փոխանդամ:

2  $3/\pi$  - տուներեն՝ трехлинейный - եռագծանի:

3 Փանայանը Թիֆլիսում ՀՅԴ զենքի պահեստի պահեստապետն էր:

4 Ռուսերեն - մետաղայ տուփ:

5 Զինապահեստ:

6 Նկատի ունի Սարգիս Մանասյանին:

2 (ՃԲ) ԳԱՐԻԿ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒՅԻ-ՄԵԿՐԵԱՆԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

3. Յեղափոխության առաջին շրջանին էր, երբ պահեստը անցավ իմ ձեռքը ժամանակաւորապէս և եթէ առանձին արձանագրութիւն և հաշուապահութիւն չէ եղած՝ ատոր պատճառը պահեստի նկատմամբ եղած այն անորոշութիւնն էր, որի մասին վերև յիշած եմ: Յանձնելէ յետոյ ես զեկուցած եմ կուսակցական մարմիններուն և ստացած եմ Փանեանէն և Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէ]էն ապահովագիր, թէ պահեստը իր դոկումենտներով յանձնած եմ ամբողջապէս, որմէ յետոյ պարզ է, որ իմ մօտ այլևս ոչ մի դոկումենտ մնացած չէր լինի, բացի Փանեանի ստորագրութենէն և մի քանի պատճէններէն, որոնք որոշ պարագաներու մէջ ինձ համար կարող էին ծառայել իբրև արդարացուցիչ միջոց կամ ապահովութիւն:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ [առանց ստորագրության]

### 53-րդ նիստ

1 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Բագուի ընկերներու դէմ յարուցուած հարցը:

Լուծում

1. Բագուի ընկերներու դէմ մի շարք ընկերներ հարց էին յարուցած: Այդ առթիւ կարդացուեցաւ ընկ. Թէոդորոսի գրած ընդարձակ բացատրագիրը: Որոշուեցաւ հետզհետէ մեր նիստերուն հրաւիրել և հարցաքննել Աւետիս Օհանջանեանը, Սուրէն Քաջբերունին, Հայկօպի ներկայացուցիչը, Յովսէփ Աղամալեանը, որ պաշտօնեայ է պարէնաւորման նախարարութեան մէջ, իսկ Ալէքսանդր Կարապետեանի և Կարօ Էնգիբարեանի մասին հարցնել ընկ. Աբ.[րահամ] Գիւլխանդանեանէն, թէ ինչ պաշտօններ են վերցուցած անոնք իր մօտ և թէ ինք տեղեկութիւն ունի անոնց անցեալի մասին:

Պիտի հարցաքննուելին նաև կարգ մը ընկերներ ալ, բայց անոնք այս նիստին ներկայ գտնուած չըլլալով՝ յետաձգուեցաւ անոնց հարցաքննութիւնը յաջորդ նիստին:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ [առանց ստորագրության]

### 54-րդ նիստ

2 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Ատոմ Քալանթարեանի ցուցմունքներն իր մասին:

Լուծում

Երևանի Կ.[ենտրոնական] կոմիտէի միջոցաւ Իջևանի կախակայուած երէք ընկերներէն Ատոմ Քալանթարեանը տեղս եկած լինելուն՝ հրաւիրուեցաւ Դատական Ատեանիս նիստին, որ ըրաւ հետևեալ ցուցմունքները:

Նահանջէն յետոյ, երբ Դիլիջան գացի, տեղական կոմիտէի ընկերները ստիպեցին ինձ, որ ինքնավարութեան մէջ մտնեմ: Այդ ժամանակ կուսակցական ահագին

պայքար կար<sup>7</sup>: Կազմալուծուած էին գրեթէ մեր բոլոր կոմիտէները, իսկ հակառակորդները ազատ, համարձակ կը գործէին: Նկատի ունենալով այս դրութիւնը, անցեալ տարի – 1919, Երևանի Կ.[Լենտրոնական] կոմիտէն ինձ իրաւունք տուաւ վերակազմել շրջանը: Եւ ես ստեղծեցի 8 շրջանային կոմիտէներ և գաւառական մը, որուն նախագահն էի:

Կազմակերպեցինք կանոնաւորապէս պայքարի գործը, և ուպրավան<sup>8</sup>, որ էսէրներու<sup>9</sup> ձեռքն էր, մեր ձեռքն առինք: Այնուհետև, սկսանք յարաբերութեան մէջ մտնել կառավարութեան հետ, ադմինիստրացիան<sup>10</sup> զէմստվօին ենթարկելու համար:

Չմոռնամ սակայն ըսել, որ մեր գործը յաջողապէս ի գլուխ հանելու համար նախ և առաջ այդ երկուքը՝ զէմստվօն և ադմինիստրացիա[ն], իրարմէ բաժնեցինք առանձին–առանձին՝ զանոնք ձեռք ձգելու համար: Եւ իրօք՝ էսէրներու ձեռքէն նախ խլեցինք ուպրավան:

Երբ Դրօն մեզ մօտ եկաւ, մենք յայտնեցինք իրեն, որ ադմինիստրացիայի մէջ կան էսէրներ և հակադաշնակցական տարրեր, Մետրոպ բէկն էլ ադմինիստրացիայի մէջ է և հակառակ է մեզ, անհրաժեշտ է ադմինիստրացիան մեզ ենթարկել: Դրօն մեզ յայտնեց, որ 15 օրէն ամէն ինչ ձեր ուզածին պէս կը կարգադրուի, ինքը Դրօն ալ հասկացաւ որ առանց ադմինիստրացիայի զէմստվօն արժէք չներկայացներ:

Հայ-վրացական պատերազմը տեղի ունեցաւ, որու հետևանքով իրերու վիճակը չփոխուեցաւ, իսկ պայքարը մեր և ադմինիստրացիայի մէջ հետզհետէ աստկացաւ:

Անցաւ ժամանակ մըն ալ, դիմեցինք նորէն կառավարութեան: Յայտնեցինք Խատիսեանին<sup>11</sup>, թէ համաձայն Քերեսսքիի<sup>12</sup> օրէնքներուն կարելի է ադմինիստրացիան ենթարկել զէմստվօին: Խատիսեան ալ խոստացաւ մեր խնդիրը կատարել:

Տեղի ունեցան այնուհետև գաւառական երկու համագումարներ, որոնք պահանջեցին ադմինիստրացիան միացնել զէմստվօին, և իսկոյն Մետրոպ բէկին գործէ հեռացնել: Դժբախտաբար, սակայն, կուսակցական բարձրագոյն մարմինը անտարբեր մնաց դէպի մեր ժողովուրդի օրինաւոր պահանջները, զիւղերը և գաւառը կը հեծէին վատ պաշտօնեաններու գործունէութեան հետևանքով, մենք դիմումներ կատարեցինք կառավարութեան և կուսակցութեան, բայց մեր բոլոր դիմումները մնացին անպատասխան: Կը պահանջէինք, որ քննիչ մարմին մը գայ մեր կողմերը և մեր դրութիւնը քննէ, բայց ոչ Կեդր.[ոնական] կոմիտէն և ոչ ալ կառավարութիւնը ուշադրութիւն կը դարձնէին:

Բայց մեր Քարուանսարայի<sup>13</sup> զէմստվօն ընդունուած էր, նա կրնար ընտրութիւններու ալ ձեռնարկել, ես այդ դիտել տուեր եմ նաև Մանասեանին: Մեր ընկերները՝ մեր պահանջներուն ուշադրութիւն չդարձնելուն համար, սակայն լքուած տրամադրութիւն մը ստեղծուած էր մեր բոլորի մէջ ալ, և այդ յայտնապէս կ'երևար, երբ օգոստոսի համագումարը կայացաւ:

Մեզ կը մեղադրեն, որ իբրև թէ վիժեցուցեր ենք համագումարը այնտեղ ներկայ չգտնուելով, բայց չէ որ համագումարին կը մասնակցէին 33 հոգի, ինչ կլինէր, եթէ անոնցմէ 3 հոգի չէր մասնակցեր: Ատկէ զատ, կառավարութիւնը մեզ չէր հրաւիրած համագումարին իբրև ուպրավայի անդամներ, նա միայն մի անգամ հեռագիր տուած էր, թէ համագումարը պիտի տեղի ունենայ, բայց էրբ և ո՞ր, այդ մասին ոչ մի խօսք: Մենք պաշտօնապէս սակայն երբէք հրաւիրուած չէինք եղեր

7 Նկատի ունի միջկուսակցական պայքարը:

8 Ռուսերեն – վարչակազմ: Տեղական ինքնակառավարման մարմինը:

9 Սոցիալիստ–հեղափոխականներ:

10 Ռուսերեն – վարչակազմ:

11 Նկատի ունի ՀՀ վարչապետ Ալէքսանդր Խատիսյանին:

12 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ձևավորված Ռուսաստանի ժամանակավոր կառավարության վարչապետ:

13 Իջևան:

համագումարին մասնակցելու, բայց հակառակ այդ հանգամանքին՝ ես մի քանի անգամ ըսած եմ Ռուբէնին<sup>14</sup>, թէ ոչ իբրև իրաւասուններ, այլ իբրև ուպրավայի անդամներ՝ երթանք համագումարին և մեր հաշիւները տանք: Ռուբէնն ալ այդ ուղղութեամբ կատարելապէս ինձ համաձայն էր:

Բայց մեր գաւառական կոմիտէն որոշեց միաձայնութեամբ, որ մենք պէտք չէ երթանք համագումարին, և մենք պարտաւոր էինք ենթարկուել այդ որոշման: Ատկէ գատ, Ն.[երքին] Գ.[ործոց] նախարարը<sup>15</sup> մեզ մի հեռագիր ալ տուած էր թէ. «Ձեր հաշիւները դրկեցէք Երևան»: Կուզէինք դրկել մեր հաշուեգրքերը Երևան, եթէ անոնց հետ երթար նաև Վարդան Վարդանեանը: Բայց նա չգնաց և մենք չդրկեցինք գրքերը առանձին, որովհետև կրնային անոնք կորսուիլ և այն ժամանակ մենք կը լինէինք պատասխանատու: Մի կողմէն, ուրեմն, մեզ չէին հրաւիրեր համագումարին, միւս կողմէ մեր հաշիւները կուզէին: Գաւառական կոմիտէն ալ տուած էր իր այդ որոշումը, ուր բոլորը աչքի առաջ ունենալով՝ մենք որոշեցինք չերթալ Դիլիջան:

Ինչո՞ւ գաւառական կոմիտէն տուաւ մի այդպիսի որոշում: Պատճառը պարզ է: Ընտրութեանց ժամանակ, երբ այնքան եռանդուն պրոպագանդա կը մղէինք ժողովուրդը մեզ գրաւելու համար, շարունակ կ'ընէինք. «Իջևանը պիտի լինի գաւառի կեդրոն»: Մեր լօզունգները Արսէն Միքայէլեանը ինք գրած է իր ձեռքով: Միքայէլեանը, երբ Երևան կը վերադառնայ, Գիւլխանդանեանին կը խօսի, թէ պէտք է Իջևանում կայանայ համագումարը: Գիւլխանդանեանը կը համաձայնի և այդ առթիւ Միքայէլեանը ինձ մի հեռագիր տուած է, թէ Աբրահամը համաձայն է, որ համագումարը կայանայ Իջևան:

Մենք սկսանք այնուհետև խօսիլ, թէ Իջևան պիտի կայանայ համագումարը: Ներկայացուցիչներ կը պատրաստուէին Իջևան գալ և ահա պարլամենտը կուտայ իր այդ որոշումը: Մեր հակառակորդներ այնպէս կարծեցին, որ մեր ըրածը մինչև այդ պարզ քաղաքական շանթած մըն է:

Մեր դրուփինն ամբողջապէս բացատրեցինք Արշակին<sup>16</sup>, բայց նա կարծես չուզեց ըմբռնել մեզ: Հակառակ անոր, որ այդ օրերուն ամբողջ Իջևանը կարծես հրաբուխի վրայ նստած էր, կրքերը լարուած էին, բայց մեր ֆրակցիան կ'ուզեր նորէն, որ երթանք Իջևան, բանանք համագումարը և յետոյ իսկոյն նորէն վերադառնանք: Այդպէս ալ կ'ընէինք, եթէ գաւառական կոմիտէն իր տուած որոշումով մեզ չարգիլեր:

Կեդրոնական կոմիտէն մեզ հեռացնելէ վերջ՝ կուսակցական կեանքը այնտեղ մեռաւ: Շատ ընկերներ այժմ բոլորովին յուսալքուած կ'ընէին. «Երևանցիներուն համար պիտի աշխատինք, որ այթոններ ապահովեն իրենց համար»: Ես ընդհակառակը՝ զանոնք կը համոզեմ ըսելով, թէ մենք անհատներու համար չենք աշխատեր: Բայց կեդրոնականի տուած որոշումէն կարծեմ նոյնիսկ Արշակ Յովհաննիսեանը խղճի խայթոց ունեցած է: Մեր մէջէն Միք. Աստուածատրեանը այնչափ է ազդուած, որ մինչև անգամ կուսակցական աշխատանքներէ բոլորովին ձեռնդառնելու էր:

Կեդրոնականը մեզ հետ կանոնաւոր յարաբերութիւններ չէ պահած, անոնք չեն կրնար այդ ուղղութեամբ մեզ մի գրութիւն ցոյց տալ: Արսէն Միքայէլեան և Զամալեան<sup>17</sup> մեր մօտ եկած են բէկական<sup>18</sup> գործերով: Արշակ Ղազարեանը<sup>19</sup> Դիլիջան գացած է. մեր շրջանը եկած է միայն Արշակ Յովհաննիսեանը:

Այս մեղքերուն մէջ կարևոր բաժինն ալ կ'իյնայ Ն.[երքին] Գ.[ործոց] նախարարութեան վրայ, որը աղմինիստրացիան չէ ենթարկած զէմսովօին, ընդհակառակը քաջալերած է Մեսրոպ բէկը, որին Սանասեանը իբրև հիւր անոր տունը իջևա-

14 Նկատի ունի Իջևանի գործիչներից Ռուբեն Տեր-Ղևոնդյանին:

15 Աբրահամ Գյուլխանդանյան:

16 Նկատի ունի Արշակ Հովհաննիսյանին:

17 Նկատի ունի Արշակ Զամալյանին:

18 Նկատի ունի վերոնշյալ Մեսրոպ բէկի գործը:

19 ՀՅԴ Բյուրոյի փոխանդամ: 1921 թ. հետո Իրանում հակաղաշնակցական պայքար է մղել:

նած է:

Իբրև վերջին խօսք ըսեմ, որ գաւառական կոմիտէն որոշած էր մեր չերթալու պատճառները և այդ առթիւ տրուած որոշումը իմացնել Կ.[Լենտրոնական] կոմիտէին, մեր արձանագրութիւնները դրկելով անոր, և երբ մի որևէ բարձրագոյն մարմնի կողմէ հրահանգ գար համագումարին մասնակցելու՝ մենք իսկոյն տեղի պիտի տայինք:

Հ.Յ.Գ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

55-րդ նիստ

3 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէրոտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Բարունակեանի ցուցմունքները իր կորսնցուցած 50.000 ռուպլիի մասին:
2. Յովի. Սարգսեանցի հարց:

Լուծում

1. Ընկեր Կարօ Բարունակեան, որ ասկէ առաջ իր կորսնցուցած 50.000 ռուպլիի մասին Դատական Ատեանի առանձին մի գրութիւն ուղղած էր, հրաւիրուեցաւ մեր նիստին, որպէսզի այդ առթիւ մեզ տայ նաև ցուցմունքներ: Ընկերոջ խնդիրը հետևեալն է:

Անցեալ տարի ինամատարութեան և աշխատանքի մինիստրութեան կողմէ Բարունակեան Կարսի շրջանը տեսչի պաշտօն կունենայ: 1919 թ. մայիս 7-ին Ալէք-սանդրապոլի պանքէն իր աւանսը կ'ստանայ մէկ միլիոն ռ.[ուբլի], զոր մի կապոցի մէջ ամփոփած իր որդուն հետ մէկ տեղ կը փոխադրէ զրահապատ գնացքը: Պանքէն դրամի կապոցները առնելու ժամանակ Բ.[արունակեանը] կը նկատէ, որ անոնց (կապոցներու) թիւը 15 է: Զրահապատ գնացքը դրուելու ժամանակ ալ Բարունակեան կը նկատէ, որ 15 կապոց դրամ կայ:

Դրամները իր որդին կը դարսէ զրահապատ գնացքին մէջ, բայց որովհետև այդ օրը գնացքը հրաման կ'ստանայ սպասել, դրամը պայուսակով կը փոխադրուի նոյն օրը Կարօ մեկնող ճանապարհորդական գնացք: Կարօ հասնելուն՝ դրամը կը փոխադրուի գրասենեակի այն բաժինը, ուր ինք կ'ապրէր և Բարունակեան կը պահէ զայն իր գլխատակին: Հետևեալ օրը դրամը կ'ուզէ պետական գանձարանը պահել, բայց գանձարանը կը մերժի այդ՝ գանձարանի համար յատկացուած բնակարանի անյարմարութեան պատճառով:

Ատր վրայ Բարունակեան կը դիմէ գեն.[երալ] Օսէփեանին<sup>20</sup>, որ դրամը պահէ բրիգադայի գանձարկղին մէջ: Օսէփեանը կը խոստանայ մեծ դրամարկղ մը բերել տալ և անոր մէջ պահել զայն: Դրամը մի քանի անգամ Բարունակեան իր մօտ և ապա գեն.[երալ] Օսէփեանին մօտ կը փոխադրի՝ դրամարկղը բերուած չըլլալու համար: Մայիս 8-ի գիշերն էլ դրամը ինք կը պահէ իր գլխատակին:

Մայիս 9-ի գիշերը Բարունակեանի գրասենեակը կը փոխադրեն եղեր մի նոր շինութեան մէջ: Բարունակեան կը մեկնի նահանգապետին մօտ և ծառաներէն մէկը սենեակի դռան մօտ պահապան կը կանգնեցնէ՝ պատուիրելով, որ ոչ ոքի չթողու ներս մտնել մինչև իր վերադարձը: Երբ կը վերադառնայ՝ կը տեսնէ, որ իրերը և ամբողջ մահճակալը փոխադրուած են արդեն, իսկ դրամի պայուսակը դրուած է սենեակի մէկ անկիւնը: Իսկոյն դրամը փոխադրել կուտայ բրիգադայի շտապը, ուր դրամարկղը բերուած էր արդէն: Դրամը կը գետեղէ անոր մէջ և բանալին վրան կ'առնէ:

Երեկոյեան, երբ դրամը կ'ստուգեն՝ կը տեսնեն, որ մէկ կապոց 50.000 ռ.[ուբ-

20 Հովսէփյան Արտեմ Գրիգորի (1879, Դաղեր-Խաչէն - 1923, Ալավերդի) - ՀՀ բանակի գեներալ-մայոր:

ԱՐԽԻՎ

Հ (ՃԲ) քարթի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

Համահայկական համընտր

լի պակաս էր, բայց կապոցներու թիւը դարձեալ 15 էր: Կասկածելով, թէ մի գուցէ Ալէքսանդրապոլէն ինք պակաս ստացած ըլլայ՝ կը դիմէ իսկոյն Երևան, խնդիրը կը պատմէ մինիստրին և կը խնդրէ, որ միջոցներ ձեռք առնէ Ալէքսանդրապոլի գանձարանը ստուգելու համար: Իր օգնականի հիւանդութեան և անոր անուան փոխադրած նախարարութեան կողմէ 5.000.000 ռուպլիի գործի կարգադրութեան հետևանքով իր 50.000 ռուպլի կորուստի քննութեան գործը կուշանայ, վերջապէս մայիս 18-ին մինիստրութենէն պատասխան կ'ստանայ, թէ Ալէքսանդրապոլի գանձատան ստուգումը կատարուած է և ոչ մի արդիւնք տուած: Ինք այնուհետև նոր բացատրութիւններ կուտայ այդ խնդրի վերաբերեալ, որպէսզի նոր քննութիւն կատարուի, իսկ սեպտ. [եմբերի] 24-ին կ'ստանայ խնամատարութեան մինիստրութեան մի գրութիւն, որով ժամանակաորապէս կը դադարցուի ինք պաշտօնավարելէ և գործը կը յանձնուի պետական դատարանին:

Ընկեր Բարունակեան մեր հարցումներուն պատասխանելով յայտնեց, որ իր գրասենեակի առաջ իբրև պահեստապահ հսկող ծառայի անունն էր Լևոն Սարգսեան: Պահապանի հսկողութիւն կատարած ժամանակ գրասենեակ կը մտնին Յուլակ Յակոբեան, Գարեգին Աղիակեան և ուրիշներ, բայց թէ առանց ղեկավարութեան իրերը փոխադրուած են թէ ոչ՝ այդ չգիտեր Բարունակեան: Բժիշկ Մկրտումեան, Արտաշէս Դարբինեան և Խանոյեան կը քննին եղեր այն սենեակը, ուր իր դրամը մի օրով մնացեր է: Գրասենեակի մէջ կը ծառայէին եղեր Աղիակեան, Աշոտ Փալանճեան և հաշուապահներ:

Գալով այն հարցին, որ Բարունակեան Հիւսիս. Կովկասի մէջ ալ դրամ կորսնցուցած է և իր հաշիւները լրիվ կերպով չէ ներկայացուցած պատկանեալ իշխանութեան, Բարունակեան պատասխանեց, որ ինք այդ մասին մանրամասն բացատրական նամակ ուղարկած է ընկ. Լ. Թադէոսեանին, իսկ վերջինս յայտնեց, որ այդ հարցի քննութեամբ Բագուի Կեդ. [րոնական] կոմիտէն զբաղած ըլլալու է:

Այդ առթիւ Դատ. [ական] Ատեանս որոշեց նամակ գրել Բագուի Կ. [ենտրոնական] կոմիտէին և հարցնել անոր, թէ Բարունակեանի այդ գործը քննուած վերջացած է և ի՞նչ որոշում տրուած է, և եթէ չէ քննուած՝ թող Կեդր. [րոնական] կոմիտէն այդ հարցի վերաբերեալ իր ձեռքի ներքև գտնուած բոլոր թղթերը մեզ ուղարկէ, որպէսզի մենք կարենանք քննել այդ հարցը:

2. Յովհ. Սարգսեանց մի քանի անգամ կրկին բերանացի կերպով Դատ. [ական] Ատեանիս անդամներուն դիմած էր՝ խնդրելով, որ իր հարցին վերջ մը տրուի: Այդ առթիւ երկու անգամ Սարգսեանց հրաւիրուեցաւ Դատ. [ական] Ատեանիս նիստին, բայց նա խուսափեցաւ ներկայանալէ: Դատ. [ական] Ատեանս որոշ կասկածներ ունենալով անոր վրայ՝ որոշեց առ այժմ թողուլ այդ խնդիրը այդ վիճակին մէջ, մի առ ժամանակ կուսակցական բարձրագոյն մարմնի միջոցաւ հսկել անոր բոլոր քայլերուն:

Հ.Յ.Դ. Դատ. [ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ [առանց ստորագրության]

56-րդ նիստ

6 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Աւետիս Օհանջանեանի ցուցմունքները իր դէմ յարուցուած հարցի մասին:

Լուծում

Մի խումբ ընկերներ դատական հարց էին յարուցած Ա. Օհանջանեանի դէմ, ուզելով գիտնալ մասնաւորապէս, թէ նա Բագուի, Նովոռոսիյի [սիսի], Երևանի մէջ իր ունեցած գործունէութեան հաշիւը գաղթականական գործերու վերաբերեալ ներկայացուցած է: Այդ առթիւ հրաւիրուեցաւ ընկ. Օհանջանեանը Դատական Ատեանիս նիստին, ուր ըրաւ հետևեալ ցուցմունքները:



Բազուի գաղթականական կոմիտեի հաշիւները իր ժամանակին եւ ներկայացուցած են. Բազուի Բէրինս<sup>21</sup> թերթին մէջ ալ պիտի տպագրուէին իմ հաշիւները, եթէ թերթը փակուած չլինէր: Ես իմ հաշիւները մանրամասն կերպով ներկայացուցած եմ Բազուի Կ.Լենտրոնական կ.կոմիտեիին, դրամի մնացածը յանձնած եմ Պապեանին (16.807 ր.ուրլի) 33 կ.կոպեկ), որը կեղրոնականի ներկայութեամբ ինք ստորագրութիւն տուած է: Գաղթականական կոմիտեի ընդհ.խմբ. մուտքը եղած է 5.041.052 ր., իսկ ելքը՝ 5.024.244 ր. (Օհանջանեան իր հաշուեթղթերը ցոյց կուտայ մեզ): Իմ այդ հաշիւները տպագրուած են նաև «Յառաջ» թերթի<sup>22</sup> մէջ: Բայց տամ ձեզ այդ խնդրի վերաբերեալ ընդարձակ տեղեկութիւններ, քանի որ այդ առթիւ հարց է յարուցուած:

Բազուի նահանջէն յետոյ, երբ Պետրովսկ անցանք՝ աշխատեցայ իսկոյն գաղթականական մարմին մը ստեղծել զանազան կուսակցութիւններու ներկայացուցիչներէն, որուն նախագահն էր Նաճարօֆ (Էսէր), իսկ զանձապահը՝ եւ: Փաստօրէն, անբողջ գործը իմ ձեռքին մէջ էր: Գաղթականներուն մէկ մասը այն տեղէն ուղարկեցինք Աստրախան, Աշխապատ, Հիւսիս. Կովկաս, Էնզելի, անոնց օգնութիւն աշխատեցանք հասցնել, իսկ եղածները կ'ապրեցնէինք ամէն կերպ: Զօր. Պիշտրախովսկէն օգնութիւն ուզեցինք 18 միլ. լիտն) լուպլիի նախահաշիւը կազմելով, բայց ստացանք ընդամենը 4,2 միլ. լիտն) լուպլի:

Տաճկական զօրքերը այնուհետև սկսան մեզ մօտենալ: Անգլիացիք մեզ յայտնեցին, որ քաղաքը պէտք է յանձնել, որովհետև մենք արդէն գերմաններուն յաղթած ենք, իսկ թուրքերուն հնազանդեցնել այլևս շատ դիւրին է: Գաղթականութեան վերաբերեալ բոլոր իրերը, հագուստը, ուտելիքը, դրամը առնելով՝ նստանք նաւը, առանց գիտնալու, թէ ուր պիտի երթանք: Բազու մեզ չընդունեցին, որովհետև գաղթականներ կային մեզ հետ: Գացինք Լենքորան, ուր միայն մթերքներ գնեցինք գաղթականներուն համար, յետոյ գացինք Էնզելի: Երբ Էնզելի իջայ՝ ինձ հետ ունէի արդէն 32 միլ. լիտն) լուպլի փող:

Հազիւ Էնզելի հասած՝ գաղթականութեան մէջ իմ ծառայողները վարակուեցան բժաւոր տիֆով, որոնցմէ երէքը մեռան: Այնտեղ տեղեկութիւն ստացանք, որ իրաւունք կը տրուի եղեր մեզ գաղթականները վերադարձնել Բազու: Իսկոյն ես գացի Բազու՝ եղած դրամը և մթերքները ինձ հետ տանելով: Մթերքները թափեցի տպարանը: Այնտեղ էր Բազրատ եպիսկոպոսը: Ուզեցինք մի մարմին ստեղծել գաղթականները պահելու համար: Պուրժուական տարրերը չափազանց դանդաղ շարժելուն ես ինքս իմ նախաձեռնութեամբ մի մարմին ստեղծեցի, ունեցանք այնուհետև հիւանդանոց, որբանոց և սկսանք կերակրել 5.000 հոգի: Եկա Մելիք-Եռլչեանը, ում ընդունեցինք մեր մարմնի մէջ: Բազուի հարուստները երկու ամիս վերջ միայն գաղթականական մարմին մը կազմեցին, որուն յանձնեցինք մեր քով եղած դրամը:

Այդ օրերուն ժողովրդի հոգեկան տրամադրութիւնը չափազանց ինկած էր: Պուրժուական տարրերը ժողովուրդը կը գրգռէին Դաշնակցութեան դէմ: Անոնք շարունակ կը հայհոյէին Ռոստոմին և Աբրահամին: Աբրահամը ինքը մի քանի անգամ գրեց Էնզելիէն, թէ պէտք է Փերիողը<sup>23</sup> հրատարակել, ես կարգի բերի տպարանը և ուզեցի գործի սկսել:

Այդ օրերուն բազմաթիւ զինագործներ, զինուորներ, նոյնիսկ գրաշարներ մեր վրայ թափուեցին և սկսան Դաշնակցութեան վրայ պահանջներ ներկայացնել, իրենց հին ամսականները պահանջել: Անհրաժեշտ էր զանոնք բաւարարել: Տեսայ, որ պահեստներուն մէջ կային բաւական քանակութեամբ մուշտակներ, բահեր ու բրիչներ: Ծախեցի զանոնք, որ մօտաւորապէս բռնեց 80.000 ր.ուրլի): Բայց դեռ փողի շատ պէտք ունէինք, քանի որ գործի պիտի սկսէինք: Համապետական փողերու հետ ևս սկսայ փոխել տալ, միշտ երկու ընկերներու

21 «Վպերյոդ» – ՀՅԴ Բաքվի Կենտրոնական կոմիտեի ռուսերէն պաշտոնաթերթ: Հայերէն թարգմանությունը՝ «Յառաջ»:

22 ՀՅԴ Բյուրոյի պաշտոնաթերթ, տպվել է Երևանում:

23 Տեն թիվ 21 ծանոթագրությունը:

ներկայություն, Բագուի փողերը, որմէ կը գոյանար բաւական մեծ տարբերութիւն մը, մօտ 120.000 ր.[ուրլի], և գոր կը յանձնէին Կ.[ենտրոնական] կ.[ոմիտեի] միջոցով գանձապահին: Պիչերախովէն ալ ստացանք յանուն գաղթականներու 250.000 ր.[ուրլի], որը մտաւ մեր կուսակցական դրամարկը: Շնորհիւ այդ գումարներուն՝ մենք պահեցինք վեց հաստատութիւններ-Բագուի կեդրոնական գաղթականական կոմիտէն, որու անունով դեռ դրամներ կ'ստանայինք գանգան վայրերէ, և մենք ալ մեր կարգին գաղթականներուն դրամներ կը հասցնէինք, երկու թերթեր, տպարանը, հայկական ինֆորմացիոն պիւրօն, դաշ.[խակցական] Կ.[ենտրոնական] կոմիտէն:

10 ամիս ես խմբագրեցի Փերիողը առանց մի կոպեկ վերցնելու:

Վեցամսուայ ընթացքին, երբ հաշիւները քննուեցան՝ տեսանք, որ Դաշնակցութեան համար ծախսուեր է 400.000 ր.[ուրլի]: Մեր կուսակցական գործունէութիւնը այնտեղ չափազանց անհրաժեշտ էր, առանց անոր մեր հակառակորդները գինայթափ չպիտի ըլլային:

Այդ օրերուն կը լսէինք, որ Հայաստանի մէջ սով է: Սակայն հանգանակութիւն բացինք<sup>24</sup> և Ատրպէյճանի կառավարութենէն ալ թոյլտուութիւն ստանալով՝ Հայաստան ուղարկեցինք 18 վակոն ապրանք – դեղորայք, հագուստ, ցորեն, գարի, բրինձ: Բժշկա-սանիտարական խումբ մըն ալ ուղարկած էինք, որը բացած է հիւանդանոցներ և ասոնք բոլորը՝ մեր ստացած փողերու շնորհիւ:

Կեդ.[րոնական] կոմիտէն, որու անդամներն էին՝ Մելիք Եոլչեան, Ա. Չուպարեան, Համասփիւռ, Պապեան, Սալխասեան, ևլն., ինձ յանձնարարած էին, որ դրկուելիք ապրանքները դասաւորեմ, ամէն ինչ կարգի բերեմ իմ հայեցողութեամբ: Ես, որ 5 միլիոն թուրքի կոնակովս հասու եմ փոխադրեր և ամէն կերպ զայն պահպաներ ու իրենց եմ հասցուցեր, վաստակած են[մ] արդէն իրենց կատարեալ վատութիւնը, և ընկերներ գիտէին, թէ ես իրենց վատութեան [վատահուութեան] հետ չարաչար վարուողներէն չեմ:

Ղրկուած 18 վակոն ապրանքներէն մէկը այրած է, միւսները՝ հասած են իրենց տեղը: Ապրանքները երբ բերինք այստեղ՝ ես կուզէի իսկոյն ցուցակագրել և ըստ այնմ բաժանել: Բայց ինձ հանդիպեցաւ Ռուբէն Տէր-Մինասեանը ու յայտնեց, որ որբերը մերկ են և անհրաժեշտ է անոնց հագուստներ տալ: Հարկադրուեցայ ես առանց ցուցակագրելու մանաւանդ, որ ցուցակագրելու հնարաւորութիւն ալ չկար, սենեակ չունէի տրամադրելի, մաս մը հագուստներ տուի որբերուն, որու համար ստացած եմ պատշաճ ստացական:

Ինձմէ շորեր կ'ստանային երկու մարմիններ. քաղաքային ինքնավարութիւնը հիւանդանոցներու համար և որբանոցային բաժանմունքը:

Քիչ յետոյ ստացանք նաև մեր ուղարկած ցորենը, գարին, ևլն., որոնք տեղաւորուեցան Գիլանգայի գործարանի մէջ Ս. Արարատեանի<sup>25</sup> կարգադրութեամբ, գարիներուն մէկ մասը գնեց քաղ.[աքային] ինքնավարութիւնը, իսկ մնացեալը չծախուեցաւ, որովհետև ոջլոտած էր:

Այդ ապրանքներուն մէկ մասը (ցորեն, գարի, ևլն.) Դաշնակցութեանն էր, մէկ մասը՝ գաղթականական կոմիտէին: Ջանազան հիմնարկութիւններու ապրանքներ ալ կային: Բագուէն, երբ մեր ապրանքները պիտի դրկէինք Երևան, Հայկօպի ներկայացուցիչները թախանձագին խնդրեցին, որ իրենց ապրանքներն ալ փոխադրենք: Ատրպէյճանէն ապրանք դուրս հանելը արդէն շատ էր դժուար: Մելիք Եոլչեանը մի կերպ կը համաձայնի, և անմիջապէս ոստիկաններու աչքէն փախցնելու համար Հայկօպի համար բերուած ապրանքները լեցնել կուտայ խառն բեռնուած վակոնին մէջ մեր ապրանքներուն հետ: Հայկօպի ներկայացուցիչը Մ.[ելիք] Եոլչեանին թուղթ մըն ալ ստորագրել տուաւ, թէ այսքան ապրանք ստացած է, և Եոլչեանը աճապարանքով կ'ստորագրէ: Ես ինքս չէի ալ գիտեր, որ Եոլչեանը

24 Մեր հակառակորդներ ալ իրենց թերթի՝ Նաշէ վրեմյայի միջոցաւ հանգանակած էին Հայաստանի համար 300.000 ր.[ուրլի], բայց այդ դրամը գործադրած էին իրենց թերթի օգտին: Ծանոթ. փաստաթղթի:

25 Նկատի ունի Սարգիս Արարատյանին:

այդպիսի ստորագրություն տուած է, Երևան գալուն պէս առանց գիտնալու, թէ որն է Հայկօպի ապրանքը, մենք կ'սկսէինք մեր բերածները վաճառել: Օր.[ինակ] Հայկօպն ալ ուներ թուղթ, մենք ալ, և այսպէս մի շարք ապրանքներ: 2-3 ամիս վերջ, երբ Հայկօպը մեզ ցուցակ մը ներկայացնելով իր ապրանքները պահանջեց՝ մենք տուինք ինչ որ մնացած էր: Հայկօպը չէ ստացած մեզմէ մաս մը կալիտ<sup>26</sup>, 24 խսիր, 15 ֆուստ թել, 36 պարալ<sup>27</sup> պարկետ, աշակերտական տետրակներ, բայց առոնց փոխարէն մենք ահագին ծախք ըրած ենք, կաշառքներ տուած ենք, մեր վակոններէն մէկը այրած է, որու մէջ թերևս իրենց ապրանքներէն ալ կար:

Դաշնակցութեան վերաբերեալ ինչ որ կարևոր ապրանք, արծաթ դրամներ, ևլն., բոլորը տրուած է իմ միջոցաւ, Դաշնակցութիւնը մուտք ունեցած է 1.329.996 ռուպլի 25 կ.: Ընդհ.[անուր] ժողովի կողմէ այդ հաշիւները նայուած են:

Ինչ կը վերաբերի միւս ապրանքներուն՝ դիմուած են հասարակական հիմնարկութիւններուն, մի քանի անձնաւորութիւններու, մեր ընկերներու, մի շարք հայ ինտելիգենտներուն: Մենք լսած էինք, որ ընկերները չափազանց նեղ դրութեան մէջ են: Օր.[ինակ], Քաջագունին<sup>28</sup> պատռուած կօշիկ կը հագնի, ատոր համար Բագուի ընկերներ իմ վրայ պարտք դրած էին, որ շատ մատչելի գնով անհրաժեշտ մի շարք իրեր տամ ընկերներու: Ոջլոտած ցորենը, 100 փութէ աւելի, վաճառած եմ մի անձնաւորութեան:

Մի շարք ապրանքներ ինձմէ վերցուցած է երկաթուղային վարչութիւնը, երբ անոնց հաշիւներն ալ ստանամ՝ բոլորը միասին հրատարակութեան պիտի տամ:

Տուն շինելու հարցը: Երկու խօսք ալ այդ մասին: Խնամատարութեան մի-նիստրութեան օգնականը - բժիշկ Մելքումեան, ինձ կանչեց և ըսաւ, թէ կայարանի շուրջ գաղթականներ թափուած են և կը գտնուեն անտանելի դրութեան մէջ, եթէ կարող էք՝ մի բան շինեցէք և այդ խեղճ գաղթականները տեղաւորէք: Ես խոստացայ: Գտայ մի քանի կիսաքանդ շինութիւններ, կ'ուզէի Սարիղամիշէն փայտ բերել տալ և զանոնք վերանորոգել: Ինձ սակայն դիտել տրուեցաւ, որ ատոնք մի քանի պուրժուաներու սեփականութիւն լինելուն՝ կրնայ այդ առթիւ դժգոհութիւն յառաջ գալ, թէ կառավարութիւնը հարուստներու տունները կը վերանորոգէ: Ատոր վրայ՝ ստիպուեցանք Սարիղամիշէն 5 վակոն փայտ բերել տալով նոր տուն մը շինել: Տունը արդէն պատրաստ է և շուտով գաղթականները կը փոխադրուին այնտեղ: Գաղթականական կոմիտէի ապրանքներուն մէկ մասն է, որ դրամի վերածուած՝ յատկացուած է նաև այս շէնքի շինութեան:

Ամեն անգամ, որ ես ինքս մի կարգադրութիւն ըրած եմ՝ խորհրդակցած եմ Քաջբերունիի, Պապալեանի, բժիշկ Միքայէլեանի և ուրիշներու հետ, երբ Բագուի Կեդր.[ոնական] Կոմիտէէն առանձին լիազօրութիւն ալ ունեմ ես: Գաղթականներու գումարներէն դեռ իմ քով կը մնայ 300.000 ռուպլի: Խորհրդակցելով ընկերներու հետ՝ կ'ուզեմ այդ գումարը յանձնել Երևանի և Էջմիածնի գէմատվո՛ներին գաղթականներուն անոնց միջոցաւ սերմացու տալու համար:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրութեան]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

57-րդ նիստ

7 Մարտ 1920  
Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:  
Օրակարգ  
1. Իջևանի կախակայուած երէք ընկերներու հարցը:

26 Այսպէս է տէքստում՝ քաղցրավենիքի տեսակ է:  
27 Այսպէս է տէքստում:  
28 Նկատի ունի Հովհաննես Քաջագունին:

Լուծում

Իջևանի կախակայուած երէք ընկերներու շուրջ մեր հարցաքննութիւնները վերջացած համարելով (Երևանի Կ.Լենտրոնական) կոմիտէն մեզ յանձնած էր նաև Իջևանի գաւառական կոմիտէի 1919 թ. հոկտեմբերին այս հարցի առթիւ կազմած արձանագրութիւնները և տուած որոշումը), Դատական Ատեանս իր հանելիք վերջնական եզրակացութեան մասին մտքերու փոխանակութիւն ունենալով գտաւ, որ Իջևանի ընկերները գտնուած էին հակակարգապահ ընթացքի մէջ Դիլիջանի համագումարին ներկայ չլինելով, թէև անոնց այդ ընթացքը ունեցած էր մեղմացուցիչ պատճառներ, ինչպէս են ընտրութեանց ժամանակ այդ շրջանի դաշնակցական ընկերներու ժողովուրդին ըրած այն խոստումը, թէ Իջևանը պիտի լինի գաւառի կեդրոն, գաւառական կոմիտէ տուած այն որոշումէ, թէ իրաւատուներ պէտք չէ երթան համագումարին, ուրիշ մի քանի պատճառներ: Դատ. [սական] Ատեանս այդ առթիւ որոշեց ուղղել նկատողութիւն Իջևանի հակակարգապահ ընկերներուն, և վերացած համարելով Հ.Յ.Դ. Երևանի Կեդր. [ոնական] կոմիտէի կողմէ Իջևանի երկու ընկերներու – Քալանթարեանի և Տէր-Ղևոնդեանի, վերաբերմամբ տրուած որոշումը՝ ընդունել զանոնք վերստին կուսակցութեան շարքերուն մէջ:

Բանաձևի վերջնական մշակումը ձգուեցաւ ընկ. Օզանեանին, որ յաջորդ ժողովին Դատ. [սական] Ատեանիս պիտի ներկայացնէ վաւերացուած այս խնդրի առթիւ կազմուելիք բանաձևը, որոշումը:

Հ.Յ.Դ. Դատ. [սական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրութեան]  
Անդամներ՝ [առանց ստորագրութեան]

58-րդ նիստ

8 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէտեան, Համ. [բարձում] Տէր-տէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Իջևանի երէք ընկերներու հարցը,

2. Վ. Քրմոյեանի յարուցած հարցը կուսակցական մի շարք ընկերներու դէմ:

Լուծում

1. Իջևանի ընկերներու վերաբերմամբ ընդունուեցաւ հետևեալ բանաձևը և որոշուեցաւ զայն յղել Հ.Յ.Դ. Բիւրօին՝ «Յառաջ»-ի մէջ հրատարակելու համար:

**Հ. Յ. Դ. Դատական Ատեանի որոշումը ընկերներ Ռուբէն Տէր-Ղևոնդեանի, Ատոմ Քալանթարեանի և Միքայէլ Աստուածատրեանի մասին**

1920 թ. մարտի 8, Երևան: Հ.Յ.Դ. IX-րդ Ընդհ. [անուր] ժողովի լիազօրութեամբ, կուսակցական Դատական Ատեանս, մասնակցութեամբ նախագահ Յովսէփ Տէր-Դաւթեանի, անդամներ՝ Լևոն Թաղէտեանի և Մերուժան Օզանեանի, քննութեան առնելով Հ.Յ.Դ. Երևանի Կեդր. [ոնական] կոմիտէի 1919 թ. նոյ. [եմբերի] 7-ին տուած որոշումը Իջևանի ընկերներէն Ռուբէն Տէր-Ղևոնդեանի, Ատոմ Քալանթարեանի, Միքայէլ Աստուածատրեանի մասին, որոնք իբրև իրաւատուներ իրենց բացակայութեամբ պատճառ են դարձեր Դիլիջանի տեղական ինքնավարութեան համագումարի որոշեալ ժամանակի չբացուելուն, որու հետևանքով Կեդրոնական կոմիտէն կուսակցութեան շահերի տեսակէտից իրենց անթոյլատրելի վարմունքի համար, որոշեր է առաջին երկուքը ժամանակաւորապէս հեռացնել Հ.Յ.Դ. Երևանի Կեդր. [ոնական] կոմիտէի շրջանի անդամներու շարքերէն և գործը յանձնել Դաշնակցութեան IX-րդ Ընդհ. [անուր] ժողովի կողմէ ընտրուած Գերագոյն Դատական Ատեանին, իսկ նոյն համագումարին իրաւատու ընտրուած Միքայէլ Աստուածատրեանը իր հակակարգապահական քայլերու համար յանձնել նոյն Դատ. [սական] Ատեանին դատելու, լսելով նաև Երևանի Կեդր. [ոնական] կոմիտէի ներկայացուցիչներու, նոյն

շրջանը իբրև գործիչ ուղարկուած Արշակ Յովհաննիսեանի, ինչպէս նաև Ատոմ Քալանթարեանի, Ռուբէն Տէր-Ղևոնդեանի, Միքայէլ Աստուածատրեանի բերանացի ցուցմունքները, Իջևանի գաւառական կոմիտէի 1919 թ. հոկտեմբերին այս հարցի առթիւ կազմած արձանագրութիւնները և տուած որոշումները, եկաւ հետևեալ եզրակացութեան.

Ա. Նկատելով, որ Հայաստանի Հանրապետութեան պարլամենտի որոշումները պարտադիր են մեր հանրապետութեան բոլոր քաղաքացիներուն, ինչպէս նաև մեր կուսակցական բոլոր ընկերներուն համար, և թէ այդ նոյն պետական հաստատութիւնը որոշած ըլլալով ժամանակին Դիլիջանը գաւառի կեդրոն ճանչնալ՝ թէ Իջևանի գաւառական կոմիտէն և թէ Դիլիջանի համագումարի համար ընտրուած իրաւասունները պարտաւոր էին ենթարկուել տրուած այս որոշման,

Բ. Նկատելով սակայն, որ այդ հակակարգապահական ընթացքը յառաջ է եկեր գլխաւոր մի քանի պատճառներէ, որոնք են. ա. ընտրութեանց ժամանակ այդ շրջանի դաշնակցական ընկերներու տեղական ժողովուրդին պահանջներուն և կարիքներուն ընդառաջ գնալով՝ ժողովուրդին ըրած այն խոստումը, թէ Իջևանը պիտի լինի գաւառի կեդրոն, բ. Իջևանի գաւառական կոմիտէի տուած որոշումը, որ արգելած է իրաւասունները համագումարի երթալ,

Դատական Ատեանս կ'որոշէ.

Ա. Ուղղել նկատողութիւն Իջևանի շրջանի ընկերներուն իրենց հակակարգապահական քայլի համար,

Բ. Վերացած համարելով Հ.Յ.Դ. Երևանի Կեդր. [ոնական] կոմիտէի կողմէ Իջևանի երկու ընկերներու-Քալանթարեանի և Տէր-Ղևոնդեանի վերաբերմամբ ժամանակաւորապէս կուսակցական շարքերէն կախակայուելու որոշումը, վերստին ընդունել զանոնք կուսակցութեան շարքերուն մէջ:

2. Ընկ. Վահագն Քրմոյեան դատ.[ական] հարց յարուցած լինելով Վարազդատ Տէրոյեանի, Սմբատ Բորոյեանի, Ռուբէն Դրամբեանի, Գր.[իզոր] Բուլղարացիի, Հայկակ Կոսոյեանի, Գրիգոր Ղլղաթեանի, բժիշկ Ա. Տէր-Պողոսեանի, 1919 թուին ստեղծուած Վանի կոմիտէի դէմ, որոշուեցաւ Քրմոյեանի Դատ.[ական] Ատեանիս ներկայացուած թղթերէն մեղադրական ակտեր կազմել և դրկել վերոյիշեալ ընկերներուն:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրութեան]  
Անդամներ՝ [առանց ստորագրութեան]

59-րդ նիստ

11 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Մեղադրական ակտերու ընթերցում և վաւերացում:

Լուծում

1. Որոշուեցաւ հետևեալ ձևով մեղադրական ակտեր դրկել Դատ.[ական] Ատեանիս մօտ ամբաստանուած հետևեալ ընկերներուն՝ Տէրոյեանի, Սմբատի, Ռ. Դրամբեանի, Գ. Բուլղարացիի, Հայկ. Կոսոյեանի, Գր. Ղլղաթեանի, բժիշկ Ա. Տէր-Պողոսեանի և 1919-ին կազմուած Վանի կոմիտէի երէք ընկերներուն:

Մեղադրական կէտեր Վարազդատ Տէրոյեանի դէմ

1920 թ. մարտի 11, Երևան: Հ.Յ.Դ. Գերագոյն Դատական Ատեանը ծանօթանալով ընկ. Վահագն Քրմոյեանի 1919 հոկտ.[եմբերի] 8-ին և 1920 փետր.[վարի] 24-ին մեզ ներկայացուցած բողոք-գրութիւններուն, ըստ այդ գրութեանց մեզ կը ներ-

ԱՐԽԻՎ

Հ (ԺԲ) փարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

Վէմ համահայկական հանդես

կայացնել հետևեալ մեղադրական կէտերը, որոնցմով կ'ամբաստանուիք դուք հակալուսակցական և հակակարգապահական քայլերու մէջ:

1. 1919 թ. փետրուարի սկիզբները, երբ կը կայանայ Արևմտահայ բ. համագումարը, դուք իբրև դաշնակցական կ'ընտրուիք համագումարի երկրորդ նախագահ: Համագումարի աշխատանքներու ժամանակ ընդունելով Հ.Յ.Դ. Կ.[ենտրոնական] կոմիտէի տեսակէտը Միացեալ Հայաստանի վերաբերմամբ, դուք կ'ընտրուիք նաև Գործադիր Մարմնի անդամ: Այնուհետև, սակայն, հակառակ համագումարի ցանկութեան և մեր կուսակցական մարմիններու քաղաքականութեան, կանգնելով այն տեսակէտի վրայ, թէ արևմտահայութեան քաղաքականութեան վարիչն է Գործադիր Մարմինը, կը նկատէք այդ մարմինը իբրև իրաւահասարակ ներկայ կառավարութեան, և կաշխատէք Հայաստանի կառավարութեան հակառակ քաղաքականութիւն վարել:

2. Գործադիր Մարմինը, որուն նախագահն էիք և դուք, կառավարութենէն և կուսակցութիւնէն անկախաբար գատ նուիրակներ կ'ուղարկէ Պիչի և Թոմսընի մօտ, արևմտահայ առանձին զօրամասեր կազմակերպելու և ներգաղթի ծրագիր մշակելու:

3. Նոյն Գործադիր Մարմինը՝ հակառակ Երկրի Կեդր.[ոնական] կոմիտէի, Բիւրօի և կառավարութեան տեսակէտներուն, դիմում կը կատարէ Անդրանիկին՝ ընդունելու կազմուող արևմտահայ զօրամասերու հրամանատարութիւնը:

4. Ձեր նախագահութեան ներքև գտնուող Գործ.[ադիր] Մարմինը բացասական դիրք կը բռնէ նաև Տիգրան Պաղտասարեանի կազմած արևմտահայ երկրորդ կամաւորական բանակի հանդէպ և գրաւոր թէ բանաւոր պրոպագանդայի միջոցաւ կ'աշխատի քայքայել այդ բանակը, որ կազմուած էր Երկրի Կեդր.[ոնական] կոմիտէի դիմումի համաձայն և Բիւրօի կամքով: Այդ բոլորի հետևանքը այն կ'ըլլայ, որ Գործադիր Մարմնի, կուսակցութեան և կառավարութեան յարաբերութիւնները չափազանց կը լարուին և, երբ Արմէն Սատունի և Վ. Քրոնյեան Թիֆլիսէն Երևան կը վերադառնան՝ մինչև այդ վարուած քաղաքականութիւնը քննութեան կ'առնեն, գործունէութեան նոր ուղի կը գծեն և կը փոխեն Գործադիր Մարմնի նախագահը:

5. Համաձայն արևմտահայ երկրորդ համագումարի բանաձևին Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի, Բիւրօի և Հայաստանի Կ.[ենտրոնական] կոմիտէներու խառն ժողովներու որոշումներուն, որոնց կը մասնակցէիք և դուք, կառավարութիւնը կը վճռէ յայտարարել Մայիս 28-ի ակտը: Այդ առթիւ կառավարութիւնը կը դիմէ Գործադիր Մարմնին 12 պատգամաւորներ ուղարկելու պարլամենտ: Դուք, սակայն միացած Գործադիր Մարմնի անդամ երէք ընկերներու հետ, կը մերժէք այդ պահանջին ընդառաջ երթալ: Ճգնաժամը հարթելու համար Մայիս 27-ի կէսօրին տեղի կունենայ Բիւրօի, Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի, Գործադիր Մարմնի դաշնակցական անդամներու և Ամերիկայի Կ.[ենտրոնական] կոմիտէի ներկայացուցչի խառն ժողովը, 9 ձայնով ընդդէմ 2-ի կ'որոշուի, որ յետագայ որոշումները պարտադիր պիտի լինեն դաշնակցական բոլոր ընկերներու համար: Կորոշուի նաև, որ 12 պատգամաւոր ուղարկուի պարլամենտ: Բայց հակառակ այդ որոշման՝ դուք նոյն օրուայ երեկոյեան Գործադիր Մարմնի ժողովին ձեր մի քանի ընկերներու հետ միացած, ամէն կերպ կ'աշխատէք սկանդալ յառաջ բերել՝ չընդունելով կառավարութեան առաջարկը և յայտարարուած ակտը ամլութեան դատապարտելով: Միայն նախագահի կէս ձայնի առաւելութեամբ կ'որոշուի ընդունել և ընդառաջ երթալ կառավարութեան յայտարարութեան, որը եղած էր նաև Արևմտահայ բ. համագումարի և կուսակցական մարմիններու պահանջով:

6. Մայիս 28-ի ակտէն յետոյ երկու մասի կը բաժնուի Գործադիր Մարմինը: Դուք ձեր համախոհներու հետ միասին Գործադիր Մարմնի դիւանի անունով կը գրէք նամակ վարչապետին յայտնելով, որ արևմտահայերու միակ իրաւատէրը դարձեալ Գործադիր Մարմինն է: Այդ կերպով դուք ուզած էք բացասական վերաբերմունք ցոյց տալ Մայիս 28-ի ակտի վերաբերմամբ:

7. Բոլոր այս տարածայնութիւնները հարթելու համար Բիւրօն երկու անգամ

ժողովի կը հրաւիրէ ձեզ, բայց դուք կտրուկ կերպով կը մերժէք ժողովի երթալ:

8. Այդ պայքարին զուգընթաց դուք՝ իբրև Գործադիր Մարմնի և Վանի կոմիտէի անդամ, կը մասնակցիք և մի ուրիշ շարժման: Վանի կոմիտէն ակտիւ պայքար կը մղէ, որ արևմտահայ մասսաները չմասնակցեն պարլամենտական ընտրութեան՝ հակառակ Բիւրօի որոշման, որ արևմտահայ դաշնակցականները կազմակերպուին Երկրի Կ.Լենտրոնական կոմիտէի մէջ: Վանի կոմիտէի անդամները կուզեն վերստեղծել Վասպուրականի Կեդր. [ոնական] կոմիտէն: Այս բոլոր շարժումներուն դուք ակտիւ կերպով մասնակցած էք:

9. Բացի վերոյիշեալ մեղադրական կէտերէն դուք կ'անբաստանուիք նաև, որ ձեր Երոպայէ վերադարձին Վանի մէջ ոչ մի կուսակցական գործունէութիւն չունենալէ զատ՝ Վանի վարժապետարանին մէջ ակտիւ պայքար և պրոպագանդ մղած էք Դաշնակցութեան դէմ:

**Մեղադրական կէտեր Սմբատ Բորոյեանի դէմ**

1. 1918<sup>29</sup> փետրուարի սկիզբները, երբ կը կայանայ Արևմտահայ բ. համագումարը դուք՝ իբրև դաշնակցական ընդունելով Հ.Յ.Դ. Կ.Լենտրոնական կոմիտէի տեսակէտը Միացեալ Հայաստանի վերաբերմամբ, կ'ընտրուիք Գործադիր Մարմնի անդամ: Այնուհետև, սակայն հակառակ համագումարի ցանկութեան և մեր կուսակցական բարձրագոյն մարմիններու քաղաքականութեան, կանգնելով այն տեսակէտի վրայ, թէ արևմտահայերու քաղաքականութեան վարիչն է Գործադիր Մարմինը, կը նկատէք այդ մարմինը իբրև իրաւահաւասար ներկայ կառավարութեան և կ'աշխատիք Հայաստանի կառավարութեան հակառակ քաղաքականութիւն վարել:

2. Գործադիր Մարմինը, որուն կ'անդամակցէիք և դուք, կառավարութենէն և կուսակցութենէն անկախաբար պատուիրակներ կուղարկէ Պիչի և Թոմարնի մօտ արևմտահայ առանձին գօրամասեր կազմակերպելու և ներգաղթի ծրագիր մշակելու: Թիֆլիս կը մեկնէք և դուք իբրև պատուիրակ: Ի վերջոյ, սակայն, երբ Արևելեան Բիւրօի Թիֆլիս գտնուող անդամները գործունէութեան նոր հրահանգներ կուտան Արմէն Սասունիին և Վ. Քրմոյեանին, որու հետևանքով կը յետաձգուի Պիչի և Թոմարնի մոտ կատարուելիք դիմումը, դուք այդ առթիւ բողոք կը բարձրացնէք Գործ. [ադիր] Մարմնի ժողովին մէջ:

3. Նոյն Գործադիր Մարմինը՝ հակառակ Երկրի Կ.Լենտրոնական կոմիտէի, Բիւրօի և կառավարութեան տեսակէտներու, դիմում կը կատարէ Անդրանիկին՝ ընդունելու կազմուող արևմտահայ գօրամասերու հրամանատարութիւնը:

4. Գործադիր Մարմինը բացասական դիրք կը բռնէ նաև Տիգրան Պաղտասարեանի կազմած Արևմտահայ Բ. կամաւորական բանակի հանդէպ և գրաւոր թէ բանաւոր պրոպագանդայի միջոցաւ կ'աշխատի քայքայել այդ բանակը, որ կազմուած էր Երկրի Կեդր. [ոնական] կոմիտէի դիմումի համաձայն և Բիւրօի կամքով: Այդ բոլորի հետևանքը այն կ'ըլլայ, որ Գործադիր Մարմնի, կուսակցութեան և կառավարութեան յարաբերութիւնները չափազանց կը լարուին և երբ Արմէն Սասունի և Վ. Քրմոյեան կը վերադառնան Թիֆլիսէն Երևան՝ մինչև այդ վարուած քաղաքականութիւնը քննութեան կ'առնեն, գործունէութեան նոր ուղի կը գծեն և կը փոխեն Գործ. [ադիր] Մարմնի նախագահը:

5. Համաձայն Արևմտահայ Բ. համագումարի բանաձևին՝ Երկրի Կ.Լենտրոնական կոմիտէի, Բիւրօի և Հայաստանի Կ.Լենտրոնական կոմիտէներու յաճոն ժողովներու որոշումներուն, երբ կառավարութիւնը կը վճռէ յայտարարել Մայիս 28-ի ակտը և կը պահանջէ արևմտահայերէն 12 պատգամաւոր, դուք որպէս Գործադիր Մարմնի անդամ, կը մերժէք ընդառաջ գնալ այդ առաջարկութեան: Ճգնաժամը հարթելու համար Մայիս 27-ի կէսօրին տեղի կունենայ Բիւրօի, Երկրի Կ.Լենտրոնական կոմիտէի, Գործադիր Մարմնի դաշնակցական անդամներու և Ամերի-

29 Այստեղ գործ ունենք պարզ վրիպակի հետ: Պետք է կարդալ 1919: Նույնը նաև՝ հաջորդ ամբաստանագրերում: Ա.Հ.:

կայի Կ.[ենտրոնական] կոմիտեի ներկայացուցչի խառն ժողովը: 9 ձայնով ընդդեմ 2-ի կ'որոշուի, որ յետագայ որոշումները պարտադիր պիտի լինեն դաշնակցական բոլոր ընկերներու համար: Կ'որոշուի նաև, որ 12 պատգամատուր դրկուի պարլամենտ: Բայց հակառակ այդ որոշման՝ դուք նոյն օրուայ երեկոյեան Գործադիր Մարմնի ժողովին մի քանի ընկերներու հետ միացած կ'աշխատիք ամէն կերպ սկանդալ յառաջ բերել, չընդունելով կառավարութեան առաջարկը և յայտարարուած ակտը անլուծեան դատապարտելով: Միայն նախագահի կէս ձայնի առաւելութեամբ կ'որոշուի ընդունել և ընդառաջ երթալ կառավարութեան յայտարարութեան, որը եղած էր նաև Արևմտահայ Բ. համագումարի և կուսակցական մարմիններու պահանջով:

6. Մայիս 28-ի ակտէն յետոյ դուք երկու մասի կը բաժնէք Գործ.[ադիր] Մարմինը: Դուք ձեր համախոհ ընկերներու հետ միասին Գործադիր Մարմնի դիւանի անունով կը գրէք նամակ վարչապետին յայտնելով, որ արևմտահայերու միակ իրաւատէրը դարձեալ Գործադիր Մարմինն է: Այս կերպով դուք ուզած էք բացասական վերաբերում ցոյց տալ Մայիս 28-ի ակտի վերաբերմամբ:

7. Բոլոր տարածայնութիւններու համար Բիւրօն երկու անգամ ժողովի կը հրաւիրէ ձեզ, բայց դուք կտրուկ կերպով կը մերժէք ժողովի երթալ:

8. Այդ պայքարին զուգընթաց դուք՝ իբրև Գործադիր Մարմնի անդամ, ակտիւ կերպով կը մասնակցիք և մի ուրիշ շարժման: Վանի կոմիտէն ակտիւ պայքար կը մղէ, որ արևմտահայ մասսաները չմասնակցեն պարլամենտական ընտրութիւններուն հակառակ Բիւրօի որոշման, որ արևմտահայ դաշնակցականները կազմակերպուին Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտեի մէջ, Վանի կոմիտեի անդամները կ'ուզեն վերստեղծել Վասպուրականի Կ.[ենտրոնական]կոմիտէն: Այդ բոլոր շարժումներուն դուք ակտիւ կերպով մասնակցած էք:

9. Բացի վերոյիշեալ մեղադրական կէտերէն դուք կ'ամբաստանուիք նաև, որ Արևմտահայ Ա. համագումարին ուժեղ պայքար սկսած էք Դաշնակցութեան դէմ և մօտեցած էք հայ ժողովրդական կուսակցութեան: Դիադինի վերջին կռիւներուն և Էզլիջայի մէջ մեծամեծ թալաններ ըրած էք: Փոխանակ ուղղակի 9-րդ Ընդհ. [անուր] ժողովին ընելու ձեր դիմումը՝ հրապարակ հանած էք տետրակ սը, որը ի վերջոյ հրատարակուած է «Հայաստանի ձայն» թերթին<sup>30</sup> մէջ: Սերտ յարաբերութեան մէջ մտած էք Մակուի խաների և տիկին Ռաֆայէլեանի հետ, որը լրտեսութեան մէջ մեղադրուելով՝ սպանուած է Ալէքսանդրապոլի մէջ:

Որոշուեցաւ առայժմ Սմբատի վերաբերեալ սոյն մեղադրական կէտերու յղումը յետաձգել:

### **Մեղադրական կէտեր Ռուբէն Դրամբեանի դէմ**

1920 թ. մարտի 11, Երևան: Հ.Յ.Դ. Գերագոյն Դատական Ատենանը ծանօթանալով ընկ. Վ. Քրմոյեանի 1919 թ. հոկտ.[եմբերի] 8-ին և 1920 թ. փետր.[վարի] 24-ին մեզ ներկայացուցած բողոք գրութիւններուն, ըստ այդ գրութեանց ձեզ կը ներկայացնէ հետևեալ մեղադրական կէտերը, որոնցմով կ'ամբաստանուիք հակակուսակցական և հակակարգապահական քայլերու մէջ:

1. 1918 թ. փետրուարի սկիզբները, երբ կը կայանայ Արևմտահայ Բ. համագումարը, դուք իբրև դաշնակցական ընդունելով Հ.Յ.Դ. Կեդրոնական կոմիտեի տեսակէտը Մ.[իացյալ] Հայաստանի վերաբերմամբ, կ'ընտրուիք համագումարի կազմակերպիչ կոմիտեի և Գործադիր Մարմնի անդամ: Այնուհետև, սակայն, հակառակ համագումարի ցանկութեան և մեր կուսակցական մարմիններու քաղաքականութեան կանգնելով այն տեսակէտի վրայ, թէ արևմտահայերու քաղաքականութեան վարիչն է Գործադիր Մարմինը, կը նկատէք այդ մարմինը իբրև իրաւահաւասար ներկայ կառավարութեան և կ'աշխատէք Հայաստանի կառավարութեան հակառակ քաղաքականութիւն վարել:

2. Յիշեալ Գործադիր Մարմինը, որուն կ'անդամակցէիք և դուք, կառավարու-

<sup>30</sup> Հայ ժողովրդական կուսակցութեան պաշտոնաթերթ, տպվել է Երևանում:



թենէն և կուսակցութենէն անկախաբար պատուիրակներ կ'ուղարկէ Պիչի և Թոմսընի մօտ արևմտահայ առանձին զօրամասեր կազմակերպելու և ներգաղթի ծրագիր մշակելու:

3. Նոյն Գործադիր Սարմինը՝ հակառակ Երկրի Կեդր. [ոնական] կոմիտէի, Բիւրօի և կառավարութեան տեսակէտներուն, դիմում կը կատարէ Անդրանիկին՝ ընդունելու կազմուող արևմտահայ զօրամասերու հրամանատարութիւնը:

4. Գործադիր Սարմինը բացասական դիրք կը բռնէ Տիգրան Պաղտասարեանի կազմած արևմտահայ երկրորդ կամաւորական բանակի հանդէպ և գրաւոր թէ բանաւոր պրոպագանդայի միջոցաւ կ'աշխատի քայքայել այդ բանակը, որ կազմուած էր Երկրի Կ. [ենտրոնական] կոմիտէի դիմումի համաձայն և Բիւրօի կամքով: Այդ բոլորի հետևանքն այն կ'ըլլայ, որ Գործադիր Սարմնի, կուսակցութեան և կառավարութեան յարաբերութիւնները չափազանց կը լարուին և երբ Արմէն Սասունի և Վ. Քրմոյեան Թիֆլիսէն Երևան կը վերադառնան՝ մինչև այդ վարուած քաղաքականութիւնը քննութեան կառնին, գործունէութեան նոր ուղի կը գծեն և կը փոխեն Գործադիր Սարմնի նախագահին:

5. Համաձայն Արևմտահայ Բ. համագումարի բանաձևին՝ Երկրի Կ. [ենտրոնական] կոմիտէի, Բիւրօի և Հայաստանի Կ. [ենտրոնական] կոմիտէներու խառն ժողովներու որոշումներուն, որոնց կը մասնակցիք և դուք, կառավարութիւնը կը վճռէ յայտարարել Մայիս 28-ի ակտը: Այդ առթիւ կառավարութիւնը կը դիմէ Գործադիր Սարմնին 12 պատգամաւորներ ուղարկելու պարլամենտ: Դուք, սակայն միացած Գործադիր Սարմնի անդամ երէք ընկերներու հետ, կը մերժէք այդ պահանջին ընդառաջ երթալ: Ճգնաժամը հարթելու համար Մայիս 27-ի կէսօրին տեղի կ'ունենայ Բիւրօի, Երկրի Կ. [ենտրոնական] կոմիտէի, Գործադիր Սարմնի դաշնակցական անդամներու և Ամերիկայի Կ. [ենտրոնական] կոմիտէի ներկայացուցչի խառն ժողովը: 9 ձայնով ընդդէմ 2-ի կ'որոշուի, որ յետագայ որոշումները պարտադիր պիտի լինեն բոլոր ընկերներու համար: Կ'որոշուի նաև, որ 12 պատգամաւոր ուղարկուի պարլամենտ: Բայց հակառակ այդ որոշման՝ դուք նոյն օրուայ երեկոյեան Գործադիր Սարմնի ժողովին ձեր մի քանի ընկերներու հետ միացած ամէն կերպ կ'աշխատիք սկանդալ յառաջ բերել, չընդունելով կառավարութեան առաջարկը և յայտարարուած ակտը ամլութեան դատապարտելով: Միայն նախագահի կէս ձայնի առաւելութեամբ կ'որոշուի ընդունել և ընդառաջ երթալ կառավարութեան յայտարարութեան, որը եղած էր նաև Արևմտահայ Բ. համագումարի և կուսակցական մարմիններու պահանջ:

6. Մայիս 28-ի ակտէն յետոյ երկու մասի կը բաժնուի Գործադիր Սարմինը: Դուք ձեր համախոհներու հետ միասին Գործադիր Սարմնի դիւանի անունով կը գրէք նամակ վարչապետին, յայտնելով, որ արևմտահայերու միակ իրաւատէրը դարձեալ Գործադիր Սարմինն է: Այդ կերպով դուք ուզած էք բացասական վերաբերմունք ցոյց տալ Մայիս 28-ի ակտի վերաբերմամբ:

7. Բոլոր այս տարածայնութիւնները հարթելու համար Բիւրօն երկու անգամ ժողովի կը հրաւիրէ ձեզ, բայց դուք կտրուկ կերպով կը մերժէք ժողովի երթալ:

8. Այս պայքարին զուգընթաց դուք իբրև Գործադիր Սարմնի անդամ կը մասնակցիք և մի ուրիշ շարժման: Վանի կոմիտէն ակտիւ պայքար կը մղէ, որ արևմտահայ մասսաները չմասնակցեն պարլամենտական ընտրութիւններուն հակառակ Բիւրօի որոշման, որ արևմտահայ դաշնակցականները կազմակերպուեն Երկրի Կ. [ենտրոնական] կոմիտէի մէջ, Վանի կոմիտէի անդամները կ'ուզեն վերստեղծել Վասպուրականի Կ. [ենտրոնական] կոմիտէն: Այս բոլոր շարժումներուն դուք ակտիւ կերպով մասնակցած էք:

(Մէկ շաբաթ միջոց տրուած է պատասխանելու համար)

**Մեղադրական կէտեր Գրիգոր Բուղարացիի դէմ**

1920 թ. մարտ 11, Երևան: Հ.Յ.Դ. Գերագոյն Դատական Ատեանը ծանօթանալով ընկ. Վահագն Քրմոյեանի 1920 թ. փետր. [վարի] 24-ին մեզ ներկայացուցած

բողոք-գրութեան ձեզ կը ներկայացնի համաձայն այդ գրութեան հետևեալ մեղադրական կէտերը, որոնցմով դուք կ'ամաբաստանուիք հակակուսակցական և հակակարգապահական քայլերու մէջ:

1. 1918 թ. փետրուարի սկզբները, երբ կը կայանայ Արևմտահայ Բ. համագումարը, դուք իբրև դաշնակցական ընդունելով Հ.Յ.Դ. Կեդրոնական կոմիտէի տեսակէտը Միացեալ Հայաստանի վերաբերմամբ, կ'ընտրուիք Գործադիր Մարմնի անդամ: Այնուհետև, սակայն, հակառակ համագումարի ցանկութեան և մեր կուսակցական մարմիններու քաղաքականութեան, կանգնելով այն տեսակէտի վրայ, թէ Գործադիր Մարմինը արևմտահայերու քաղաքականութեան միակ վարիչն է, կը նկատէք այդ մարմինը իբրև իրաւահաւասար ներկայ կառավարութեան և կ'աշխատէք Հայաստանի կառավարութեան հակառակ քաղաքականութիւն վարել:

2. Գործադիր Մարմինը, որուն կ'անդամակցիք և դուք, կառավարութիւնէն և կուսակցութիւնէն անկախաբար պատուիրակներ կ'ուղարկէ Պիչի և Թոմսընի մօտ, արևմտահայ առանձին զօրամասեր կազմակերպելու և ներգաղթի ծրագիր մշակելու:

3. Նոյն Գործադիր Մարմինը հակառակ Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի, Բիւրօի և կառավարութեան տեսակէտներուն, դիմում կը կատարէ Անդրանիկին՝ ընդունելու կազմուող արևմտահայ զօրամասերու հրամանատարութիւնը:

4. Գործադիր Մարմինը բացասական դիրք կը բռնէ նաև Տիգրան Պաղտասարեանի կազմած արևմտահայ երկրորդ կամաւորական բանակի հանդէպ և գրաւոր թէ բանաւոր պրոպագանդայի միջոցաւ կ'աշխատէ քայքայել այդ բանակը, որ կազմուած էր Երկրի Կեդրոնական կոմիտէի դիմումի համաձայն և Բիւրօի կամքով: Այդ բոլորի հետևանքն այն կըլլայ, որ Գործադիր Մարմնի, կուսակցութեան և կառավարութեան յարաբերութիւնները չափազանց կը լարուին և երբ Արմէն Սատունի և Վ. Քրմոյեան Թիֆլիսէն Երևան կը վերադառնան՝ մինչև այդ վարուած քաղաքականութիւնը քննութեան կ'առնին, գործունէութեան նոր ուղի վր գծեն և կը փոխեն Գործադիր Մարմնի նախագահը:

5. Համաձայն Արևմտահայ Բ. համագումարի բանաձևին՝ Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի, Բիւրօի և Հայաստանի կոմիտէներու խառն ժողովներու որոշումներուն, որոնց կը մասնակցէիք և դուք, կուսակցութիւնը կը վճռէ յայտարարել Մայիսի 28-ի ակտը: Այդ առթիւ կառավարութիւնը կը դիմէ Գործադիր Մարմնին 12 պատգամաւորներ ուղարկելու պարլամենտ: Դուք, սակայն միացած Գործադիր Մարմնի անդամ երէք ընկերներու հետ, կը մերժէք այդ պահանջին ընդառաջ երթալ: Ըզնաժամը հարթելու համար Մայիս 27-ի կէսօրին տեղի կունենայ Բիւրօի, Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի, Գործադիր Մարմնի դաշնակցական անդամներու և Ամերիկայի Կ.[ենտրոնական] կոմիտէի ներկայացուցչի խառն ժողովը: 9 ձայնով ընդդէմ 2-ի կորոշուի, որ յետագայ որոշումները պարտադիր պիտի լինեն դաշնակցական բոլոր ընկերներու համար: Կորոշուի նաև, որ 12 պատգամաւոր ուղարկուի պարլամենտ: Բայց հակառակ այդ որոշման՝ դուք նոյն օրուայ երեկոյեան Գործադիր Մարմնի ժողովին ձեր մի քանի ընկերներու հետ միացած, ամէն կերպով կ'աշխատիք սկանդալ յառաջ բերել՝ չընդունելով կառավարութեան առաջարկը և յայտարարուած ակտը ամրութեան դատապարտելով: Միայն նախագահի կէս ձայնի առաւելութեամբ կ'որոշուի ընդունել և ընդառաջ երթալ կառավարութեան յայտարարութեան, որը եղած էր նաև Արևմտահայ Բ. համագումարի և կուսակցական մարմիններու պահանջ:

6. Մայիս 28-ի ակտէն յետոյ երկու մասի կը բաժնուի Գործադիր Մարմինը: Դուք ձեր համախոհներու հետ միասին Գործադիր Մարմնի դիւանի անունով կը գրէք նամակ վարչապետին յայտնելով, որ արևմտահայերու միակ իրաւատէրը դարձեալ Գործադիր Մարմինն է: Այդ կերպով դուք ուզած էք բացասական վերաբերմունք ցոյց տալ Մայիս 28-ի ակտի վերաբերմամբ:

7. Բոլոր այս տարածայնութիւնները համար Բիւրօն երկու անգամ ժողովի է հրաւիրել ձեզ, բայց դուք կտրուկ կերպով կը մերժէք ժողովի երթալ:

(Մոյն մեղադրական ակտը Պոլսոյ մարմնի միջոցաւ դրկուեցաւ ընկ. Պուլղա-  
րացիին: Յայտնուեցաւ իրեն, որ երբ բերանացի յայտարարութիւններ ալ կուզէ  
տալ բացի գրաւորէն, և Պոլսոյ շրջանին մէջ ապրող վկաներ ալ ունի մատնանշե-  
լիք իր հարցի վերաբերեալ, զանոնք ներկայացնէ Պոլսոյ Կ.Լենտրոնական կոմի-  
տէին):

ԱՐԽԻՎ

### Մեղադրական կէտեր Գրիգոր Ալղաթեանի դէմ

1. 1918 թուի պատերազմին դուր՝ իբրև Ապահովութեան Խորհուրդի Երևանի  
շրջանային մարմնի անդամ, աշխատած էք ամէն կերպ քայքայել արևմտահայ գո-  
րամասերը, մանաւանդ Վանի Դ. գունդը:

2. Վանի կոմիտէին մէջ հակադաշնակցական դիրք էք բռնած: Գրաւոր կեր-  
պով դիմած էք Բիւրօին բեկանելու համար Մայիս 28-ի ակտը և արևմտահայ  
պատգամաւորները յետ կանչելու: Ձեր ժողովներէն մէկի մէջ (սախագահութեամբ  
Ա. Մաքսապետեանի) բանաձև էք հանած ակտի պոյկոտ յայտարարելու պարլա-  
մենտական ընտրութիւններուն դէմ և աշխատած էք արևմտահայ մասսաները հա-  
կառակ տրամադրելու ընտրութիւններուն:

3. Հակառակ Բիւրօի որոշման, որ բոլոր արևմտահայ դաշնակցականները  
պիտի կազմակերպուին Երկրի Կեդր. լոնական կոմիտէի մէջ, Վանի կոմիտէի ան-  
դամները, ինչպէս և դուք, ուզած են վերստեղծել Վանի Կ.Լենտրոնական կոմի-  
տէն: Ուղղած էք Բիւրօին նամակ սը՝ յայտնելով ձեր որոշումը միայն ի գիտութիւն,  
այդպիսով դուք ուզած էք անտեսել Բիւրօի գերիշխանութիւնը:

(Տրուած է 7 օր միջոց պատասխանելու համար):

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՆ, 2014  
2 (ԺԲ) ԳՄՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒՅԻ-ՄԵԱԿՐԱՆԵՐ, 2014

### Մեղադրական կէտեր Հայկակ Կոստյեանի դէմ

1. Իբր Ապահովութեան Խորհուրդի Երևանի շրջանային մարմնի նախագահ՝  
վարած էք հակապետական և հակակուսակցական քաղաքականութիւն, երկու  
հայկական հատուածները իրարու հանդէպ թշնամաբար տրամադրելով:

2. Աշխատած էք քայքայել յատկապէս Վանի Դ. գունդը:

3. Մերժած էք հաշիւ տալ Արևմտահայ Խորհուրդի ներկայացուցիչ Կարօ  
Սասունիին:

4. Վանի կոմիտէին մէջ հակադաշնակցական դիրք էք բռնած: Գրաւոր կերպով  
դիմած էք Բիւրօին բեկանելու համար Մայիս 28-ի ակտը և արևմտահայ պատգա-  
մաւորները յետ կանչելու: Ձեր ժողովներէն մէկի մէջ (սախագահութեամբ Ա.  
Մաքսապետեանի) բանաձև հանած էք ակտի պոյկոտ յայտարարելու պարլամեն-  
տական ընտրութիւններուն դէմ և աշխատած էք արևմտահայ մասսաները հակա-  
ռակ տրամադրելու ընտրութիւններուն:

5. Հակառակ Բիւրօի որոշման, որ բոլոր արևմտահայ դաշնակցականները պի-  
տի կազմակերպուին Երկրի Կեդր. լոնական կոմիտէի մէջ Վանի կոմիտէի անդամ-  
ները՝ ինչպէս և դուք, ուզած էք վերստեղծել Վանի Կ.Լենտրոնական կոմիտէն:  
Ուղղած էք Բիւրօին նամակ սը՝ յայտնելով ձեր որոշումը միայն ի գիտութիւն,  
այդպիսով դուք ուզած էք անտեսել Բիւրօի գերիշխանութիւնը:

(Տրուած է 7 օր միջոց պատասխանելու համար):

### Մեղադրական կէտեր Բժիշկ Ա. Տէր-Պօղոսեանի դէմ

1. Վանի կոմիտէի մէջ գտնուելով՝ ցոյց տուած էք հակակարգապահական ըն-  
թացք: Մի շարք ընկերներու հետ միասին դիմած էք Բիւրօին բեկանելու Մայիսի  
28-ի ակտը և արևմտահայ պատգամաւորներու յետ կանչելու: Ձեր ժողովներուն  
մէկի մէջ (սախագահութեամբ Ա. Մաքսապետեանի) մասնակից եղած էք այն բա-  
նաձևին, որով ակտի պայքար կը յայտարարուի պարլամենտական ընտրութիւն-  
ներուն: Ձեր յետագայ ժողովներուն բուռն պրոպագանդ կը մղէք արևմտահայ

ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԽԱՄՈՒՆ

մասսաները ընտրություններուն հակառակ տրամադրելու:

2. Հակառակ Բիւրօի որոշման, որ բոլոր արևմտահայ դաշնակցականները պիտի կազմակերպուէին Երկրի Կեդր. [ոնական] կոմիտէի մէջ Վանի կոմիտէի անդամները՝ ինչպէս և դուք, ուզած էք վերստեղծել Վանի Կ. [ենտրոնական] կոմիտէն: Ուղղած էք նաև նամակ մը Բիւրօին՝ յայտնելով ձեր որոշումը միայն ի գիտութիւն, այսպիսով դուք ուզած էք անտեսել Բիւրօի գերիշխանութիւնը: (Տրուած է 7 օր միջոց պատասխանելու համար):

**Մեղադրական կէտեր 1919 թուին ստեղծուած Հ.Յ.Գ. Վանի կոմիտէի անդամներէն Մ. Էյնաթեանի, Ղ. Սերոբեանի, Կ. Պէլէրեանի դէմ**

1. Իբրև Վանի կոմիտէի անդամներ՝ անցեալ տարի, երբ Հայաստանի կառավարութիւնը Մայիսի 28-ի ակտը կը յայտարարէ՝ դուք միացած ուրիշ մի շարք ընկերներու կաշխատէք բեկանել յիշեալ ակտը և յետ կանչել արևմտահայ պատգամաւորները: Հանած էք ձեր ժողովներէն մէկի մէջ (նախագահութեամբ Մաքսապետեանի) բանաձև մը ակտի բոյկոտ յայտարարելու պարլամենտական ընտրութիւններուն դէմ:

2. Հակառակ Բիւրօի այն որոշման, որ բոլոր արևմտահայ դաշնակցականները պիտի կազմակերպուին Երկրի Կեդր. [ոնական] կոմիտէի մէջ դուք իբրև Վանի կոմիտէի անդամներ ուզած էք վերստեղծել Վանի Կ. [ենտրոնական] կոմիտէն: Ուղղած էք նաև նամակ մը Բիւրօին ի գիտութիւն, այսպիսով դուք ուզած էք անտեսել Բիւրօի գերիշխանութիւնը:

(Տրուած է 7 օր միջոց պատասխանելու համար):

Հ.Յ.Գ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ [առանց ստորագրության]

60-րդ նիստ

14 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան: Օրակարգ

1. Կ. Բարունակեանի հարց,
2. Միշա Արզումանեանի հարց:

Լուծում

1. Ընկեր Կ. Բարունակեանի պետական գումարներէն 50.000 ռ. կորսնցուցած ըլլալու հարցի մասին Դատական Ատեանս որոշեց նախ քան այս մասին վերջնական որոշում մը տալը՝ իր անդամներէ մէկի միջոցաւ դիմել պետական քննիչին, հասկանալու համար, թէ ինչ քննութիւն կատարուած է այս մասին:

Գալով իր Հիւսիս.[ային] Կովկասի մէջ ունեցած գործունէութեան, որու մասին տեղեկութիւն ստանալու համար ասկէ առաջ դիմած էինք Բագուի Կ. [ենտրոնական] կոմիտէին, որոշուեցաւ այդ առթիւ գրել Արամ Ալշուճեանին (Ալէքսանդրապոլ), որպէսզի Բագուի մէջ ընկ. Թադէոսեանին այս հարցի առթիւ տուած տեղեկութիւնները գրաւորապէս մեզ ևս ուղարկի:

2. Ընկեր Միշա Արզումանեանի ծանօթ գործին հետ միասին Բիւրօս մեզ ներկայացուցած էր նաև յիշեալ ընկերոջ Դ. կամաւորական գնդի առկախ թողուցած հաշիւները, որպէսզի քննենք և այդ մասին ալ որոշում մը տանք: Դատական Ատեանս նկատելով, որ այդ հաշիւները մեզ համար պարզ չեն, որ այդ մասին Բիւրօս ինքը վերջնական քննութիւն չէ կատարած և մենք այժմ չգիտենք, թէ Արզումանեանի պարտքը իսկապէս որքան է, որոշուեցաւ գրել Բիւրօին առաջարկե-

լով, որ այս մասին ճշգրիտ տեղեկություններ տայ, ըստ այնմ, այդ գործին ընթացք տալու համար մեր կողմէ:

Գալով Ղանազովի սպանության խնդրոյն՝ Դատական Ատեանս երկարօրէն այս մասին մտքերու փոխանակութիւնէ յետոյ գտաւ, որ Միշա Արզումանեանը իր հակակարգապահական ընթացքի համար արժանի է յանդիմանութեան և 5 ամիս մեր կազմակերպական շարքերէն կախակայուելու: Այս մասին մանրամասն բանաձև կազմել թողուեցաւ մեր յաջորդ նիստին:

Հ.Յ.Գ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

61-րդ նիստ

17 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Գալթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

1. Միշա Արզումանեանի հարցը,

2. Թիֆլիսի Կեդր.[ոնական] կոմիտէի դէմ յարուցուած հարցի առթիւ (1917 դեկտ.[եմբեր] 2-1918 յուլիս 2-ի կողմ) Հիպերիկ Չոլագեանի տուած ցուցմունքները,

3. Արարատ Տէր-Գրիգորեանի հարց:

Լուծում

1. Հ.Յ.Գ. Դատական Ատեանի դատավճիռը Միշա Արզումանեանի դէմ:

1920 թ. մարտի 17, Երևան: Հ.Յ.Գ. IX Ընդհ.[անուր] ժողովի լիազօրութեամբ կուսակցական Դատական Ատեանս, մասնակցութեամբ նախագահ Յովսէփ Տէր-Գալթեանի, անդամներ՝ Լևոն Թաղէոսեանի և Մերուժան Օզանեանի, քննութեան առնելով Հ.Յ.Գ. Բիւրօի կողմէ յարուցուած հարցը ընկեր Միշա Արզումանեանի դէմ, որը լուրջ կասկածներ ունենալով գեներալ Ղանազովի մասին, թէ նա Հայաստանի Հանրապետութեան գինուորական գաղտնիքները կը հաղորդէ Տենիքիին, 1919 թ. հոկտ.[եմբերի] 27-ի առաւօտուն ինքնագլուխ կերպով կը թելադրէ մի քանի ընկերներու, որպէսզի մանրամասն կերպով խուզարկեն դէպի Տենիքիինի բանակը ճամբարուող գն.[երալ] Ղանազովի գոյքերը և խլեն անոր քով եղած բոլոր թղթերը, որու հետևանքով սակայն տեղի կունենայ կոչի Ղանազովի և իր վրայ յարձակուողներու միջև, կը վիրաւորուի ծանրապէս Ղանազովը և մի քանի օր վերջ կը մեռնի, լսելով նաև այդ առթիւ Բիւրօի ներկայացուցիչներու բերանացի ցուցմունքները, Միշա Արզումանեանի գրաւորապէս մեզ հաղորդած բացատրութիւնները, թէ ինչ արդարացուցիչ շարժառիթներու հետևանքով ինք հարկարուած էր ինքնագլուխ կերպով կարգադրելու, որ խուզարկուեն Ղանազովի գոյքերը և թէ որքան ինք դէմ է եղած անոր սպանութեան, լսելով նաև Ղանազովի վրայ յարձակող ընկերներու և այս գործին հետ ունէ կերպով կապուած մի շարք անձնատրութեանց բացատրութիւնները, եկաւ հետևեալ եզրակացութեան.

Ա. Նկատելով, որ որքան ալ Ղանազովը կասկածելի անձնատրութիւն մը եղած ըլլար և այդ մասին հաւաստի տեղեկութիւններ որքան ալ որ շատ ուշ ատեն ստացուած ըլլային, յամենայն դէպս անոր մասին ըլլալիք ունէ ձեռնարկ ունէ ընկերոջ կողմէ պէտք էր նախապէս ենթարկուեր մեր կուսակցական բարձրագոյն մարմնի հաւանութեանը, իրողութիւն մը, որու մէջ թերացած է ընկ. Արզումանեան,

Բ. Նկատելով, սակայն, որ Միշա Արզումանեան ուզած էր միմիայն խուզարկել տալ Ղանազովի գրպանները և գոյքերը, մեր հանրապետութեան վերաբերեալ կարևոր գաղտնիքներ պարունակող թղթերը ձեռք բերելու համար, և թէ այս ձեռ-

ԱՐԽԻՎ

Հ (ԺԲ) քաթի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014  
Չ (ԺԲ) քաթի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014  
Վէմ համահայկական հանդես

նարկին շարժառիթը չէ եղած երբէք ոչ թալան և ոչ ալ սպանութիւն,

Գ.Նկատելով, որ Ղամազով ամենակատաղի կերպով դիմադրած է իր հագուստները և գոյքերը խուզարկել փորձողներուն, ուզելով նոյնիսկ անակնկալ կերպով իր գրպանէն հանած ատրճանակով սպանել զանոնք՝ հակառակ վերջիններու այն բացորոշ յայտարարութեան, թէ իրենց նպատակն է միմիայն իր թղթերը ստանալ,

Դ. Նկատելով, որ խուզարկելու համար ուղարկուած երկու ընկերները ուզելով նախ Ղամազովը զինաթափ ընել, որպէսզի երկուստէք սպանութիւն տեղի չունենայ, հարկադրուեալ են գիրկընդխառն անոր հետ կռուի բռնուել, որու հետևանքով սակայն անակնկալ կերպով իրենցմէ մէկի ատրճանակը կը պարպուի և Ղամազովը գլխէն վիրաւորուած գետին կիյնայ, իսկ յարձակող երկու ընկերները այդ բոպէին չեն ալ գիտնար, թէ իրենցմէ մէկի, թէ՛ Ղամազովի ատրճանակն էր պարպուած, և թէ այդ իրենք կը գիտնան, երբ այդ գործի աւարտումէն յետոյ իրենց տները կը վերադառնան,

Ե. Նկատելով, որ հակառակ իր տուած պատուերին, որպէսզի սպանութիւն տեղի չունենայ՝ Միշա Արզումանեան խստիւ կը յանդիմանէ իր գործակիցները, որ իրենց գործողութեան ընթացքին աւելի զգոյշ չեն եղած և տեղի տուած են արհնհեղութիւն,

Զ. Նկատելով վերջապէս, որ Հ.Յ.Դ. Բիւրօն այս գործի առթիւ յանդիմանած է Միշան և զայն չեզոքացուցած է կուսակցական աշխատանքէ, այս խնդրի մասին մանրամասն քննութիւն կատարել և վերջնական որոշում մը տալը մեզ ձգելով,

Դատական Ատեանս որոշեց.

Խստիւ յանդիմանել Միշա Արզումանեանը իր հակակարգապահական ընթացքի համար և հաղորդել Հ.Յ.Դ. Բիւրօնի ի գործադրութիւն, թէ Միշա Արզումանեան իր հակակարգապահական ընթացքի համար հինգ ամսով (1919 նոյ. [եմբերի] 1-1920 ապրիլի 1) կախակայուած է իր կազմակերպութեան շարքերէն:

2. Արևելեան Բիւրօի Քննիչ Յանձնաժողովը մեր մի շարք կուսակցական մարմիններու և հաստատութեանց հաշիւները քննելու առթիւ մեղադրանքներ ըրած էր նաև 1917 թ. դեկտ. [եմբեր] 2-1918 թ. յուլիս 2-ը գործի վրայ գտնուող Վրաստանի Կ.[ենտրոնական] կոմիտէի, ինչպէս նաև «Աշխատաւոր» թերթի մասին: Այդ առթիւ ընկ. Հիպերիկ Ճոլախեան (այդ շրջանի Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէ]ի անդամներէն մին) ըրաւ հետևեալ ցուցմունքները.

«Միայն «Աշխատաւոր» թերթն է, որ կանոնաւոր հաշուապահութիւն ունեցած է: Ալէքսանդր Ծատրեանն էր հաշուապահը, անոր յաջորդեց Սարեանը, յետոյ՝ Սամսոնը: Բոլոր հաշիւները տարուած են օրդերների սխտեմով, միայն մի ամսուայ օրդերները կորած են, և այդ պատահեցաւ այն ժամանակ, երբ քշեցին մեզ մեր գրասենեակէն: Բոլոր գրքերը և հաշուամատեանները տրուած են յանձնաժողովին ի քննութիւն: Անոնք այժմ կը գտնուեն Սամսոնին մօտ: Ես ինքս Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէ]ի զեկուցում տուած եմ և խնդրած եմ, որ քննութիւն այդ հաշիւները, բայց մինչև այժմ ալ այդ հաշիւները չեն քննուած: Իմ զեկուցումս պահուած է այդ թղթերուն մէջ:

Չմոռնամ ըսել, որ այդ հաշիւներէն դուրս Իւնիոն ձաշարանէն ստացուած և ծախսուած է 6.000 ռ. Վ. Խորենիի միջոցաւ, այդ չէ մտած մեր հաշիւներուն մէջ ոչ իբրև մուտք և ոչ ալ իբրև ելք:

Ինչ կը վերաբերի Կ.[ենտրոնական] կոմիտէի դէմ հանուած մեղադրանքներուն՝ ես առ այժմ շատ բան չեմ կարող ըսել: Սա միայն ասեմ, որ Կ.[ենտրոնական] կոմիտէի աշխատանքները բաժնուած էին զանազան մասերու, իւրաքանչիւր մասի պատասխանատուն մէկ կամ երկու ընկեր էր: Ճիշտ է Ջիֆոնի մասը սկիզբը շատ անկանոն էր, բայց վերջը բաւական կանոնաւորուեցաւ: Կ.[ենտրոնական] կոմիտէն իր հաշիւներուն համար ունեցեր է մուտքի և ելքի հաշուեմատեան միայն:

Այդ հարցի մասին ձեզ ընդարձակ տեղեկություն կուտամ խորհրդակցելով իմ միւս ընկերներուն հետ, որոնք են Վարոս Պապայեան, Էլիբէգեան, Տիգ. Աւետիսեան, Մկրտիչ Լթուեցեան, Արամ Նալչաձեան»:

3. Արարատ Տէր-Գրիգորեանի հարցի մասին ընկ. Հիպերիկ Չոլագեան հետևեալն ըսաւ.

Արարատ Տէր-Գրիգորեան Շարաֆեանի հետ պայմանաւորուած էր իր գործարանին համար ճարպ գնելու: Ծարպ գնելու համար դրամը ստացուել է Քոթանձեանէն: Գնուած իւղը մի անգամ չէ տուել Շարաֆեանը, ծախուել է վնասով: Այդ վնասը հանելու համար կը գնեն յետոյ սապոն և կը տանեն Ալէքսանդրապոլ: Սապոնի գնման և վաճառման գործին մէջ Արարատ Տէր-Գրիգորեանը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցած:

Հաստատապէս չեմ կարող ըսել, թէ Սերգոն գիտեր թէ առևտուրի համար գործածուած այդ դրամները կը պատկանին հայոց կառավարութեան, բայց կը կարծեմ, որ գիտցած ըլլալու է, քանի որ այդ ամենուս ալ ծանօթ էր:

Որոշուեցաւ նամակ գրել Արարատ Տէր-Գրիգորեանին և Բանուոր Սերգոնին, թէ երկու ամսուայ ընթացքին պէտք է հաւասարապէս վճարեն պետութեան վերաբերեալ պակասած գումարը, որմէ յետոյ Դատական Ատեանս կուտայ այդ մասին իր վերջնական վճիռը:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրութեան]  
Անդամներ՝ [առանց ստորագրութեան]

## 62-րդ նիստ

19 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Համ. Տէրտէրեան, Մերուժան Օգանեան:

Օրակարգ

1. Վարագդատ Տէրոյեանի հարց,
2. Հայկակ Կոստյեանի հարց,
3. Արարատ Տէր-Գրիգորեանի հարց,
4. Կարօ Սասունիի հարց:

Լուծում

1. Ի պատասխան մեր N. 188 և մարտ 11 թուակիր գրութեան, որով Դատ.[ական] Ատեանս հրաւիրած էր Տէրոյեանը իր դէմ հանուած մեղադրական 9 կէտերուն պատասխանել գրաւորապէս, Տէրոյեան մարտ 17 թուակիր նամակով մը մեզ կը գրէ, թէ. «Իմ եղած մեղադրական 9 կէտերէն առաջին 8-ը առանց իմ միջամտութեան ալ կարող են հերքուել ունէ լուրջ քննութեան մէջ, ունէ դատարանի կամ անհատի կողմէ, որ ճշմարտութեան նուազագոյն շահագրգռութիւնն ուզենայ ունենալ: Գալով 9-րդ կէտին՝ ոչինչ չեմ կարող ըսել, որովհետև ձեր գրութեան մէջ յայտնի չէ, թէ այդ յօդուածի տրամադրութիւնը հաստատող ինչ փաստաթղթեր կան կամ ինչ փաստեր»:

Դատական Ատ.[յանս] որոշեց, թէ Վարագդատ Տէրոյեանի և թէ անոր գործակից ընկերներուն դէմ հանուած մեղադրանքները մանրամասն կերպով քննելու համար հետզհետէ հրաւիրել մեր նիստին հետևեալ ընկերները՝ առանց ցուցմունքները ստանալու համար. Վաղարշակ Յոխիկեան, Ռուբէն Տէր-Մինասեան, Սիրոն Վրացեան, Գէորգ Ղազարեան, Արմենակ Մաքսապետեան, Ներսէս Պառեան, Սահակ Տէր-Թովմասեան, Արմենակ Փոխանեան, Հնայեակ Մանուկեան, Երկրի Կ. [ենտրոնական] կոմիտէի անդամներէն մէկ-երկու ընկեր, Ամերիկայի Կ.[ենտրոնական] կոմիտէի այն ժամանակուայ ներկայացուցիչը: Ռուբէն Դրամբեանի գործի

համար կանչել մասնաւորապէս Ա. Շարաֆեանը, հասկնալու համար, թէ Դրամբեան ի՞նչ դիրք բռնած է Արևմտահայ Ա. համագումարին մէջ: Գրիգոր Գլղաթեանի գործի համար՝ Արմենակ Փոխանեանը, Խոսրով Պապայեանը, Վարդան Առաքելեանը: Հայկակ Կոստյեանի հարցի համար հրաւիրել և հարցաքննել նոյն անձնաւորութիւնները, ինչպէս նաև՝ Կարօ Սասունին, Ռուբէն Տէր-Մինասեանը:

2. Հայկակ Կոստյեանը ևս իր դէմ հանուած մեղադրական կէտերուն պատասխանած էր գրաւորապէս հետևեալ կերպով. «Գերագոյն Դատական Ատեանը N. 192 մարտ 13 գրութեամբ կը յայտնէ Վ. Քրմոյեանի իմ դէմ յարուցած ամբաստանութեան մեղադրական 5 կէտերին, որոնք կը կրեն ընդհ.[անուր] բնոյթ, առանց հիմնաւորման, կօնկրետ և փաստացի հանգամանքից գուրկ միանգամայն: Ուստի, որպէսզի հնարաւորութիւն ունենամ անձամբ կամ գրաւոր պատասխանելու մեղադրական կէտերուն, կը խնդրեմ ինձ տաք մեղադրող պարոնի ամբաստանագրի հարազատ պատճէ՛նը՝ ծանօթանալու մեղադրանքի կէտերու պատճառաբանութեան և փաստացիութեան»:

Դատական Ատեանս որոշեց վերոյիշեալ նամակի ընթերցումէն յետոյ հետզհետէ մեր նիստին հրաւիրել Հայկակ Կոստյեանի հարցի հետ կապ ունեցող վկաները, անոնց ցուցմունքները ստանալու համար:

3. Արարատ Տէր-Գրիգորեանի հարցի առթիւ Դատ.[ական] Ատեանիս նախագահը յայտնեց, որ Տէր-Գրիգորեանը խնամատարութեան մինիստրութեան պարտք ունի եղեր ոչ թէ 19.130 ռ., այլ 112.227 ռ. 20 կ.: Ատեանս, սակայն նկատելով, որ սա այժմ ինք պէտք չունի այդ գումարի մասին իր կողմէ հարց յարուցանելու՝ կանգնեցաւ իր նախորդ ժողովին մէջ տուած որոշման վերջ, այն է՝ գրել նամակ Սերգոյին և Արարատ Տէր-Գրիգորեանին, թէ 8.660 ռ.ի մնացեալ հաշիւը պէտք է փակեն Քոթանձեան, Տէր-Գրիգորեան և Սերգո, բայց որովհետև առաջիւնը մեռած է, ապա ուրեմն այդ գումարի վճարումը կ'իյնայ իրենց երկուքին վրայ:

4. Որոշուեցաւ յաջորդ ժողովին ձեռք առնել նաև Կարօ Սասունիի հարցը, զայն շուտով վերջացնելու համար:

Ը.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ [առանց ստորագրության]  
Անդամներ՝ [առանց ստորագրության]

63-րդ նիստ

22 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օգանեան:

Օրակարգ

1. Կարօ Սասունիի հարց,
2. Խղաթեանէ և Վանի կոմիտէի երէք անդամներէն ստացուած նամակները,
3. Արևմտահայ Գործադիր Մարմնի մասին Բիւրօի կազմած արձանագրութեանց ընթերցում,

4. Դևոյեանի հարց:

Լուծում

1. Կարօ Սասունիի դէմ խմբապետ Սմբատը դատական հարց էր յարուցած՝ իբրև թէ նա «մէկ հայ, մէկ ոսկիի» խնդրին մէջ, ինչպէս նաև՝ Մուշի շրջանը հաւաքուած ցորեններու գործին մէջ, զեղծումներ է ըրած: Այս առթիւ, նա վկաներ ցոյց տուած էր Տիգրան Գաւասեանը, Վարազդատ Տէրոյեանը, Յակոբ Զաքարեանը, բժիշկ Արշակ Պօղոսեանը և Արսէն Խաչիկեանը: Այս վկաներէն առաջին երկուքը Ընդհ.[անուր] ժողովին կողմէ ժամանակաւորապէս ստեղծուած Դատական Յանձնախումբին կողմէ քննուած էին, բայց ոչ մի բացասական ցուցմունքներ չէին տուած Կարօ Սասունիի վերաբերմամբ: Յակոբ Զաքարեանը ևս բերանացի և գրաւոր ցուցմունքներ տուած էր մեզ, որոնք ոչ մի աննպաստ յայտնութիւն չէին



ըրած այդ մասին: Որոշուեցաւ նամակ գրել Նոր Բայազետ ևս իբրև վկայ ցոյց տրուած Արսէն Խաչիկեանին և անկէ տեղեկութիւններ պահանջել այս մասին, իսկ Կարո Սասունիէն տեղեկանալ, թէ ո՞ր կը գտնուի բժիշկ Պօղոսեանը, զայն ևս մեր նիստերուն մէկին հրաւիրելու համար:

Իր դէմ յարուցուած դատական հարցի առթիւ Կարո Սասունին իր մեզ գրած նամակին մէջ կը յայտնէր, որ Արամ Սարգսեան անուն մէկը իր մասին վարկաբեկիչ նամակ մը գրած է Պոլսոյ ընկերներուն: Նա ցոյց կուտար ընկերներ Ծամհուրը և Արամ Սաֆրաստեանը, որոնք այդ նամակի բովանդակութենէն տեղեկութիւն ունեն և կ'առաջարկէր, որ այդ խնդիրը ևս քննուի: Դատական Ատեանս այդ առթիւ հրաւիրեց մատնանշուած երկու ընկերները, որոնք հետևեալ ցուցմունքները տուին այդ մասին:

**Ծամհուր:** Այո, մի այդպիսի նամակ գրուած էր, բայց չեմ յիշեր նամակի ստորագրողները: 1919 փետր.վար] ամսուան մէջ էր, Պոլսոյ մեր գործօն ընկերներէն մէկը ինձ ցոյց տուաւ այդ նամակը, ուր աննպաստ տեղեկութիւններ կային Կարո Սասունիի վերաբերմամբ: Նամակաբերը ցոյց տուած էր Սասունին իբրև մի աֆերիստ, կուսակցութիւնը իր շահերուն համար գործ անող մէկը, առանց սակայն շօշափելի փաստեր ցոյց տալու:

Յետոյ յայտնուեցաւ ընկ. Ծամհուրին, թէ նա Սասունիի մասին ուրիշ ունէ տեղեկաննպաստ բան մը լսած է: Ծամհուր պատասխանեց, թէ Երևանի մէջ լսած է աննպաստ շատ տեղեկութիւններ Կարոյի մասին, որ իբրև թէ նա իր ստանձնած պաշտօններու գիտակցութիւնը չունի, աննկարագիր է: Կ'աշխատի իրեն համար դիրք շինել, զանազան մարդիկ իր ձեռքին տակ ունեցած է, զանոնք ի նպաստ իրեն գործածելու համար: «Մէկ հայ, մէկ ոսկի» խնդրին մէջ ալ աննպաստ տարածանութիւններ կան անոր մասին:

**Արամ Սաֆրաստեանը** յիշեալ նամակի առթիւ հետևեալ տեղեկութիւնները տուաւ:

Ամատունին<sup>31</sup> և Կարո Սասունին երբ այստեղէն Պոլիս կերթան՝ Արամ Սաֆրաստեան Ամատունիին միջոցաւ նամակ մը կը դրկէ Գուրգէն Էթմէքճեանին, վարկաբեկելով Սասունիին, թէ նա զեղծարար է, շարլաթան է և թէ չէ կարելի անոր վստահել կուսակցական գործեր: Այդ նամակը դարձաւ մեր բոլորիս սեփականութիւնը: Մենք ծիծաղեցանք նամակագրին վրայ, որովհետև բոլորս ալ Կարո Սասունիին լաւ կը ճանչնայինք:

Այդ նամակը Կարոյին շատ ցաւ կը պատճառէ, և երբ Երևանէն Պոլիս ընկան՝ Կարոն մի օր կը բռնէ Արամին և կ'ապտակէ զայն:

Մեր այն հարցումին, թէ մի ունէ տեղեկութիւն ունիք «մէկ հայ, մէկ ոսկիի» խնդրի մասին, Սաֆրաստեան ըսաւ, որ Ամատունին ինձ պատմած է, թէ Կարո Սասունին իրեն յայտնէր է, որ «մէկ հայ, մէկ ոսկիի» հաշիւներէն տակաւին իր քով մի քանի ոսկի կը մնայ, որ պիտի յանձնէ Արևմտահայ Խորհուրդին:

Դատ.[ական] Ատեանս որոշեց մեր յաջորդ նիստին հրաւիրել Արամ Սարգսեանը [՝] և իր գրած նամակի բովանդակութեան մասին տեղեկութիւններ պահանջել:

2. Ընկերներ Ղլղաթեան և Վանի կոմիտէի երէք ընկերները, ինչպէս նաև Հայկակ Կոտոյեան Դատ.[ական] Ատեանիս գրած նամակներուն ի պատասխան կը յայտնէին գրաւորապէս, թէ իրենց ուղղուած մեղադրական կէտերը ընդհ. [անուր] բնոյթ ունէին, առանց կոնկրետ և փաստացի հիմնաւորման, և թէ որպէս հնարաւորութիւն ունենային պատասխանելու կը խնդրէին մեղադրողի ամբաստանագրին հարազատ պատճէնը իրենց տալ: Որոշուեցաւ գրել իրենց, թէ իրենց ուղղուած մեղադրական կէտերը առանց ունէ փոփոխման ընդօրինակուած էին Քրմոյեանի մեզ յանձնած գրութենէն:

3. Արևմտահայ գործադիր Մարմնի մասին նախկին Արևելեան Բիւրօս ևս պահանջած էր մեզմէ քննել այդ մարմնի գործունէութիւնը: Մեր տրամադրու-

31 ՀՅԴ Կ. Պոլսի ղեկավար գործիչներից:

թեան տակ դրուած էին այդ առթիւ իր կազմած արձանագրութիւններէն մէկ քանիները, որոնք կարդացուեցան մեր ժողովին: Այդ արձանագրութիւնները նոր յայտնութիւններ չէին ըներ Գործադիր Սարմնի մասին, բացի այն յայտնութիւնէն, զոր Քրմոյեան Բիւրօին ըրած իր մէկ զեկուցման մէջ կը յայտնէր, թէ Գործադիր Սարմինը բազմաթիւ արևմտահայերու կեղծ վկայականներ բաժնած է՝ զանոնք զինուորագրութենէ ազատելու համար:

Որոշուեցաւ յաջորդ մեր նիստին կրկին հրաւիրել ընկերներ Ռուբէնը, Վրացեանը, Գ. Ղազարեանը:

4. Դևոյեան որովհետև քանզի խնդրած էր, որ իր հարցի մասին Դատ.[ական] Ատեանս շուտով հանէ իր եզրակացութիւնը, Դատ.[ական] Ատեանս որոշեց յաջորդ անգամ իր նիստին հրաւիրել Կարօ Սասունին, և որ Դևոյեանին մասին ըրած ամբաստանութիւններուն առթիւ բացատրութիւններ պահանջէ:

Ը.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի  
Նախագահ՝ Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Լ. Թաղէոսեան [ստորագրություն]